ԳԼՈԲՈՒՄ

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՀԱՐԶԱԿՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԿԱՅՔԵՐԻ ՎՐԱ

ՀՐԵԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԻՑ

14

Սեպտեմբեր, 2007

«ՆՈՐԱՎԱՆՔ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԳԼՈԲՈՒՍ
Վերլուծական տեղեկագիր

ГЛОБУС
Аналитический бюллетень

№ 14 (22)
Սեպտեմբեր, 2007թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թերարժեքության զգացումի և «տեխնոլոգիական համակարգի» խնդիրների շուրջ 3

О последних азербайджанских атаках на армянский сегмент интернета 5

Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիր. դիտարկում միջնաժամկետ գործոնների վերաբերյալ 7

Իրան. ներքաղաքական որոշ զարգացումների շուրջ 9

Վրաստանն ընտրությունների շեմին 12

Իսլամական արմատականացման վտանգ Կենտրոնական Ասիայում 15

Իրանահայ համայնք. կրթական հարցեր 19

Հունգարահայ համայնք. անցյալը և ներկան 22

Հրեական հայրենադարձության փորձից. ալիյա. 2 27

Этническое размежевание в европейском политическом опыте 30

Հայոց առևտրատնտեսական ներկայությունն աշխարհում 33

ԹԵՐԱՐԺԵՔՈՒԹՅԱՆ ԶԳԱՑՈՒՄԻ ԵՎ «ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ» ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Այսօր մեզանում զգալի տեղ են գրավում ինքնաքննադատական, հաճախ ազգային ինքնանսեմացման հասնող տրամադրությունները։ Թերարժեքության բարդույթի բնույթ կրող նման միտումները երբեմն հիմնավորվում են «պատմական» հղումներով։ Շեշտվում է հատկապես մեզանում պետական մտածողության բացակայության, վճռորոշ իրավիճակներում դավաճանության դիմելու, անընդմեջ պարտությունների մասին։ Հաղթանակներն անգամ երբեմն ներկայացվում են որպես զուտ «բարոյական»՝ դրանց վերագրելով անօգտակարության երանգ։

Մենք հեռու ենք հայությունը կատարյալ ազգ համարելու մտքից։ Համոզված ենք նաև, որ ինքնաքննադատությունն առաջընթացի նախադրյալներից մեկն է։ Առարկության և անհանգստության տեղիք են տալիս ինքնանսեմացման միտումը և ազգի, պետության զարգացման տեսանկյունից՝ նման մոտեցման ոչ արդյունավետությունը։ Այս համատեքստում նկատենք, որ հայ ժողովրդի անցած ուղին ինչ-որ չափով նման է ցանկացած հին քաղաքակրթություն ներկայացնող ազգի պատմությանը, որտեղ եղել են հավատարմության ու դավաճանության օրինակներ, ռազմավարական իմաստության և քաղաքական կարճամտության դրսևորումներ։

Հաղթանակների և պարտությունների խնդիրը, թերևս, հատուկ պարզաբանման կարիք ունի. հայության վարած հազարից անցնող հաղթական ճակատամարտերը, փորձագետների գնահատմամբ, արժանի տեղ են գրավում համաշխարհային ռազմարվեստի պատմության մեջ։ Մեր պարտությունները նույնպես արժանի են հարգալի վերաբերմունքի, և այս հարցում բովորովին ամոթ չէ սովորել ուրիշներից։ Ղրիմի պատերազմում (1854-1855թթ.) անգլիական արիստոկրատիայի ներկայացուցիչներից կազմված հեծելազորը, կատարելով հրամանատար լորդ Կարդիհանի անմիտ հրամանը, անցավ հարձակման մի կիրճով, որի երեք կողմում տեղակայված էին ռուսական հրետանին և հետևակը։ Գրոհող հեծելավաշտերը գրեթե ամբողջովին ոչնչացվեցին։ Միջադեպը ռազմարվեստի պատմության մեջ հայտնի է «թեթև հեծելազորի գրոհ» անվամբ և հրամանատարության կոպիտ սխալի դասական օրինակ է։ Սակայն բրիտանացիներն այլ կերպ մոտեցան խնդրին. «թեթև հեծելազորի գրոհը» առայսօր մատուցվում է որպես բրիտանական ազնվականության քաջության և անվեհերության օրինակ։ Համարվում է, որ անգլոսաքսերը կարող են պարտվել առանձին ճակատամարտերում, բայց ոչ՝ պատերազմում։ Ինչպես տեսնում ենք, այդ իրողությունը պայմանավորված է նաև անգլոսաքսոնյան ընտրանու կողմից իրենց (և այլոց) պատմությունն իմաստավորելու և ազգային շահերին համարժեք մեկնաբանելու կարողությամբ։

Առանձնահատուկ դիտարկման կարիք ունի «պետական մտածողության բացակայության» թեզը։ Ակնհայտ է, որ առանց նման մտածողության առկայության հայությունն այսօր դժվար թե գոյություն ունենար։ Այս իրողության վերջին վկայությունն են մեր հանրության և նրա քաղաքական ընտրանու գործողությունները խոշոր աշխարհաքաղաքական կատակլիզմի՝ Սառը պատերազմում պարտություն կրած Խորհրդային Միության փլուզման պայմաններում։ Դժվարագույն իրադրությունում, հաճախ միակ ճիշտ ռազմաքաղաքական քայլերի միջոցով, հաջողվեց պահպանել մեր պետականությունը և հաղթել ռազմական ու տնտեսական չափանիշներով մեզ գերազանցող հակառակորդին։

Խորհրդային համակարգի փլուզումը (ինչը նույնպես պարզամտորեն երբեմն վերագրվում է հայերիս) և Երրորդ՝ անկախ հանրապետության ձևավորումը նոր, լրջագույն հիմնախնդիրներ առաջացրին։ Պատերազմի և տնտեսական կոլապսի պայմաններում ձևավորվող երկրում վերացան սովորական համարվող տնտեսական երաշխիքները, ներդրվեցին նոր սոցիալական համակարգին բնորոշ անողոք հասարակական հարաբերություններ, փլուզվեց հանրության զարգացման համար առանցքային նշանակություն ունեցող գիտակրթական համակարգը։ Այս դրամատիկ իրողությունները զուգորդվում էին մարդկային ողբերգություններով և, անշուշտ, խանդավառության առիթ չէին տալիս։ Հավելյալ տագնապ էին առաջացնում

նոր ձևավորված քաղաքական ընտրանու գործողությունները, որը պետական կառավարման փորձ չուներ։ Միևնույն ժամանակ, արդարությունը պահանջում է արձանագրել, որ այլ, անգամ տեսականորեն ավելի կարող ընտրանի, որն իր վրա կվերցներ այդ ժամանակահատվածի անսպասելի զարգացումների ողջ պատասխանատվությունը, մեր հանրությունը չուներ։

Այսօր կարծես թե հանրապետության կայացման ամենադժվարին փուլն անցյալում է։ Առկա են որոշակի հաջողություններ, սակայն կան բազմաթիվ չլուծված հիմնահարցեր գրեթե բոլոր ոլորտներում։ Ավելին. երբեմն տպավորությունն այնպիսին է, որ ներկայումս կիրառվող մեթոդաբանությունը և մտածելակերպը կարող են և բավարար չլինել այդ հիմնահարցերից մի քանի կարևորագույնների լուծումները գտնելու համար։ Այս հանգամանքը հանրությունը գիտակցում է. քաղաքական ընտրանին և վերլուծաբանները հաճախ են արտահայտվում այն ոգով, թե հետագա զարգացման համար անհրաժեշտ է կատարել կամային քայլեր, որոնք իրենց մեջ պետք է կրեն «հոգևոր հեղափոխության» տարրեր։ Այդ կապակցությամբ հիշենք, որ արդի պայմաններում ցանկացած քաղաքական գործողության, այդ թվում նաև «հոգևոր հեղափոխության» հաջողողությունը պայմանավորված է առաջին հերթին այն տեխնոլոգիաների կատարելությամբ, որոնց միջոցով այն իրագործվում է։

Քաղաքակրթական զարգացումներին նվիրված իր աշխատություններում Առնոլդ Թոյնբին «Արևմուտքի» առավել մրցունակ լինելը, մասնավորապես, պայմանավորում է «տեխնոլոգիական գաղտնիքները» պահպանելու և ընդհանրապես տեխնոլոգիաները զարգացնելու ունակությամբ։ Այստեղ, թերևս, պարզաբանման կարիք կա. «տեխնոլոգիա» հասկացությունը վերաբերում է ոչ միայն բնագիտության և տեխնիկայի ոլորտի կիրառական նշանակություն ունեցող մշակումներին, այլև մարդկային կենսագործունեության ողջ ոլորտին, որտեղ ներառված են և՛ կենցաղային թվացյալ մանրուքները, և՛ խոհափիլիսոփայական մոտեցումները։ Այդ համախումբը կազմում է ամենատարբեր տեխնոլոգիաներից բաղկացած մի համակարգ, որն արդեն երկար ժամանակ ապահովում է պայմանական «Արևմուտքի» առաջատարությունը և որին (իսկ դա պետք է ընդունել) ձգտում է հասնել կամ փորձում է նմանվել մնացյալ աշխարհը։

Անշուշտ, արևմտյան տեխնոլոգիական համակարգը հեռու է անթերի լինելուց։ Այն, հաճախ միանգամայն արդարացված, բողոք է առաջացնում. այսօր այդ համակարգի վերիմաստավորման ու բարեփոխման վերաբերյալ բազմաթիվ առաջարկություններ ու կոչեր են հնչում։ Սակայն տպավորությունն այնպիսին է, որ այս իրադրությունում գործում է նույն այդ համակարգում նախապես ներդրված ինքնապահպանման կամ, այլ խոսքերով՝ ինքնազարգացման և կատարելագործման մեխանիզմը։ Եվ եթե անգամ մարդկությունը մի գեղեցիկ օր հրաժարվի առկա արևմտյան մոդելը գերակա համարելուց և փորձի ձևավորել մի նոր աշխարհակարգ, ապա կարելի է համոզված լինել. առանց «արևմտյան» փորձի իմաստավորման նման նախագիծը կլինի թերարժեք և կառաջացնի առավել մեծ հիմնախնդիրներ, քան դրանք կան այսօր։ Վերոնշյալի համատեքստում, թերևս, իմաստ ունի նշել նաև մեկ այլ հանգամանք, որի մասին քաղաքական կոռեկտության տեսանկյունից այնքան էլ ընդունված չէ խոսել. արևմտյան տեխնոլոգիական համակարգի հեղինակներն են գլխավորապես ընդհանրական հնդեվրոպական քաղաքակրթությանը պատկանող ժողովուրդները, որոնք կազմում են քրիստոնյա աշխարհի հիմնական մասը և որոնց թվին ենք պատկանում նաև մենք։ Այսինքն՝ հայությունը, լինելով այդ քաղաքակրթության մի ուրույն մաս, համատեղելի է արևմտյան տեխնոլոգիական համակարգին։ Մասամբ դրանով է պայմանավորված առավել համակարգված երկրներում մեր ազգակիցների հաստատվելու ձգտումն ու այնտեղ հաջողության հասնելու կարողությունը։

Այսպիսով, կան նախադրյալներն այն բանի, որ «հոգևոր և տեխնոլոգիական» հեղափոխությունը մեր հանրության համար անհասանելի տեսլական չէ։ Խնդիրը լուծելու համար նվազագույնը պետք է ձերբազատվել մեզ հետապնդող և արգելակող թերարժեքության զգացումից։ Այս խնդրի լուծումը նույնպես կարիք ունի որոշակի տեխնոլոգիաների կիրառման։ Մասնավորապես ավելի քան հրատապ խնդիր է առաջին փուլում իրագործել *արդի եզրաբանության միջոցով* մեր պատմության, այդ թվում՝ վերջին տասնամյակների մեկնությունը։ Տեխնոլոգիական երկրորդ փուլը ենթադրում է արդի տեղեկատվական մեթոդներով ստացված արդյունքների ամրապնդումը հասարակական գիտակցությունում։

Գագիկ Տերտերյան

О ПОСЛЕДНИХ АЗЕРБАЙДЖАНСКИХ АТАКАХ НА АРМЯНСКИЙ СЕГМЕНТ ИНТЕРНЕТА

За последний месяц азербайджанские хакеры предприняли две сильные атаки на армянские веб-сайты.

Первая атака была предпринята на ресурсы, которые находились на хостинге провайдера *«Web» (web.am)*. По имеющейся неофициальной информации, азербайджанцы нашли уязвимые места на сервере провайдера еще в начале июля и активно вмешивались в работу армянских веб-сайтов. Все обращения владельцев сайта к провайдеру оканчивались отговорками о том, что в действительности виноваты создатели сайтов, которые сделали неудачное программное обеспечение. Однако уже в первых числах сентября азербайджанцы массировано начали взламывать армянские сайты, после чего провайдер наконец принял меры. Список взломов представлен ниже, причем наиболее опасным является тот факт, что под ударом оказались сразу три новостных ресурса, которые даны в начале списка:

http://banks.am/
http://echannel.am/
http://elections2007.am/
http://auto.am
http://levonabrahamian.am/
http://armilmed.am/
http://xorenaci.am/
http://ayl.am/
http://arenicountry.am/
http://vaykgroup.am/
http://www.izoton.am/
http://artbymovses.com/
http://atp.am
http://phoneshop.am/
http://noy1877.am/
http://araratcement.am/
http://chessacademy.am/
http://acsti.am/

В ночь на 14 сентября пошла новая волна атаки на армянские интернет-ресурсы, среди которых оказались сайты фонда «Нораванк» и проект «A1+», посвященный выборам. Кроме того, фактически был атакован сайт Национальной статслужбы. Список этих сайтов прилагается ниже:

http://noravank.am
http://www.psrc.am/
http://www.wvarmenia.am/
http://test.armstat.am/
http://youthpolicy.am/
http://nature-ic.am/
http://www.education2015.am
http://www.touroperator.am
http://www.counterpart.am/
http://www.tufenkianfoundation.am

http://www.aquatek.am/
http://elections.a1plus.am/

На этот раз все сайты, подвергшиеся атаке, являлись разработкой одного и того же программиста. Хакеры обнаружили брешь в безопасности программного обеспечения сайтов и захватили их, получив полный контроль. В принципе, азербайджанцы могли полностью разрушить сайты, однако ограничились лишь размещением на них информации о взломе и ругательств в адрес армян.

По словам самого программиста, чьи сайты были атакованы, действовали профессионалы. Были захвачены сайты не на стандартном и распространенном программном обеспечении, слабые места и методы взлома которых может найти в интернете начинающий хакер, а индивидуально разработанные программы. Кроме того, азербайджанцы атаковали находящийся в стадии тестирования сайт Нацстата, ссылок на который в открытом доступе не было, что говорит о серьезной подготовке перед началом атаки. Это может свидетельствовать в пользу того, что, возможно, за этими акциями напрямую стоят азербайджанские спецслужбы.

По словам взломавшего эти сайты азербайджанского хакера, который связался со мной, причиной этой атаки стали публикации, которые были размещены в моем интернет-дневнике (блоге), а также на блогах некоторых других армян.

В публикациях говорилось о разрушении христианского кладбища в Баку. Акцент делался на то, что кроме армянских могил оскверняются могилы русских, молокан, евреев, воинов Отечественной войны. Эти публикации были массированно распространены в интернете, две из них в течение трех дней находились среди самых популярных тем по рейтингу *Yandex* (*blogs.yandex.ru*). В *Livejournal.ru* разрушение кладбища стало темой дня и фотографией дня (со ссылкой на армянские блоги). «Комсомольская правда» также разместила материал со ссылкой на эти сообщения в блогах. В результате за несколько дней эти сообщения на армянских блогах посетили более 10 тыс. посетителей, они были перепечатаны на нескольких десятках интернет-ресурсов. Ниже прилагаются некоторые из публикаций в блогах:

http://kornelij.livejournal.com/265760.html
http://gianluigi.livejournal.com/9399.html
http://ahousekeeper.livejournal.com/30994.html

В настоящее время та же самая группа азербайджанских хакеров пытается добиться доступа до сайтов, размещенных на сервере провайдера «Арминко». Общение этой группы происходит на закрытом форуме http://securitylab.az/forum/ (при регистрации форум можно читать).

Наиболее опасной является тенденция все большей профессионализации атак на армянские ресурсы. Еще год назад атаки носили довольно примитивный характер. Сегодня под ударом все чаще оказываются медийные сайты. Кроме того, очень часто владельцы взломанных сайтов бывают не в курсе, что они подверглись атаке. Из чего следует, что уязвимость армянского интернета от месяца к месяцу усиливается, и при массированной и продуманной атаке Армения может получить серьезный удар на информационном фронте. Азербайджанцы могут как парализовать деятельность армянских информационных источников в интернете, так и разместить на них дезинформацию.

Самвел Мартиросян

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ. ԴԻՏԱՐԿՈՒՄ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Չնայած բավական հիմնավորված է թվում այն մոտեցումը, որ Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման տեսանկյունից առաջիկա երկու տարիները նմանվելու են 2007-ին՝ 2008թ. Հայաստանում ու Ադրբեջանում կայանալիք նախագահական, իսկ 2009թ. ադրբեջանական Միլլի մեջլիսի ընտրությունների պատճառով, սակայն արդեն իսկ որոշակի են այն գործոնները, որոնք միջնաժամկետ հեռանկարում լուրջ ազդեցություն գործելով հարավկովկասյան անվտանգության վրա՝ չեն կարող չանդրադառնալ Ղարաբաղյան հիմնախնդրի շուրջ ընթացող գործընթացների տրամաբանությանը։

Այդ գործոններն են.

- *ՆԱՏՕ-ին Վրաստանի անդամակցության հեռանկարը.* 2006թ. սեպտեմբերից Թբիլիսին Հյուսիսատլանտյան դաշինքի հետ անցել է փոխգործակցության *«Intensified dialogue»* ձևաչափին։ Մեծ է հավանականությունը, որ արդեն 2008թ. ապրիլին Բուխարեստում կայանալիք ՆԱՏՕ հերթական գագաթաժողովի արդյունքում, եթե պաշտոնապես չհայտարարվի էլ Թբիլիսիի հետ համագործակցության նոր փուլի՝ *MAP-ի (Membership Action Plan)* մեկնարկի մասին[1], ապա վրացական ընտրանին հստակ երաշխիքներ կստանա այդ ուղղությամբ։ Առաջին հերթին պետք է այդ համատեքստում դիտարկել, օրինակ, վերջին երկու ամիսների ընթացքում նոր հարթություն տեղափոխված և այժմ միայն սրվելու միտում ունեցող ռուս-վրացական հակամարտությունը[2]։ Հարկավոր է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ 2008թ. Վրաստանում կայանալիք խորհրդարանական ու նախագահական ընտրություններին ընդառաջ Մ.Սահակաշվիլու քաղաքական թիմը միայն ՆԱՏՕ գծով ստացած հստակ երաշխիքների միջոցով կարող է «ծածկել» իր համար խիստ անբարենպաստ համարվող աբխազական ու հարավօսական հարցերը։ Վրաստանի անդամակցությունը ՆԱՏՕ-ին կամ Միացյալ Նահանգների հետ Թբիլիսիի նոր որակի ռազմական փոխգործակցության հաստատումը աննախադեպ իրավիճակ է ստեղծելու Հարավային Կովկասում, որը կարող է հանգեցնել տարածաշրջանային անվտանգության համալիրի զգալի փոփոխության։
- *Գաբալայի ռադիոտեղորոշիչ կայանի հեռանկարը և ռուս-ադրբեջանական ռազմաքաղաքական փոխգործակցության հետագա տրամաբանության հարցը.* 2012թ. լրանում է Վ.Պուտինի ու Ալիև-ավագի միջև կնքված՝ Ռուսաստանին 10 տարով Գաբալայի ռադիոտեղորոշիչ կայանը վարձակալությամբ հանձնելու մասին պայմանագրի ժամկետը։ Սակայն ամբողջ հարցն այն է, որ թե՛ կնքման պահին՝ 2002թ., թե՛ հատկապես 2012թ., երբ կլրանա պայմանագրի ժամկետը, այն չէր առնչվում և չի առնչվելու սոսկ ռադիոտեղորոշիչ կայանին։ Նշված պայմանագիրը, ըստ էության, արտացոլում էր Ռուսաստանի ու Ադրբեջանի միջև ԽՍՀՄ փլուզումից հետո առաջին անգամ ձեռք բերված ռազմաքաղաքական համալիր փոխպայմանավորվածությունները։ Ադրբեջանի թե՛ աշխարհագրական դիրքը, թե՛ աշխարհաքաղաքական նշանակությունը չեն կարող այդ երկիրը զերծ պահել Ռուսաստանի հետ ռազմաքաղաքական որևէ փոխգործակցություն ունենալուց։ Հետևաբար, ամբողջ խնդիրն այն է, թե 2012-ից հետո ինչ կարգի պայմանավորվածության են հանգելու Մոսկվան ու Բաքուն և ինչ բնույթ են ունենալու նշված ոլորտում այդ երկու երկրների հարաբերությունները։

---

[1] *MAP-ի* հաջող իրականացումից հետո Վրաստանը կարող է դառնալ ՆԱՏՕ լիիրավ անդամ։

[2] Ս.թ. օգոստոսի 6-ին Վրաստանի Գորիի շրջանի Ցիտելուբանի գյուղի մոտ նետված հրթիռի շուրջ ծագած սկանդալը դրա ցցուն օրինակն է։

- *Հայ-ռուսական ռազմաքաղաքական պայմանավորվածության հեռանկարը.* Թեև 1992-ից Հայաստանը Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (ՀԱՊԿ) անդամ է, սակայն ուշադրություն է գրավում այն հանգամանքը, որ հարկ համարվեց 1997թ. Ռուսաստանի հետ կնքել առանձին՝ «Բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության մասին» պայմանագիրը, որի ժամկետը լրանում է 2022թ.: Ամբողջ հարցն այն է, որ հաշվի առնելով տարածաշրջանային զարգացումները՝ հայ-ռուսական ռազմաքաղաքական փոխգործակցության հարցը չի կարող չդառնալ առաջիկա տարիների հայ-ամերիկյան, հայ-եվրոպական, հայ-ռուսական և անգամ՝ հայ-իրանական բանակցությունների առարկա: Այդքանով հանդերձ, հստակ է մի բան՝ անկախ այն բանից, թե ինչ նոր պայմանավորվածության կհանգեն Երևանն ու Մոսկվան 2022թ., այդ պայմանավորվածությունը և դրան նախորդող ժամանակաշրջանն իրենց որոշակի ու զգալի ազդեցությունն են թողնելու Ղարաբաղյան հիմնախնդրի շուրջ ընթացող գործընթացների վրա, որովհետև անկախ պայմանավորվածության բնույթից՝ 2022թ. այն ձեռք է բերվելու կամ չի բերվելու լիովին այլ պայմաններում, քան 1997-ին էր:
- *Իրանական հարց.* Սպիտակ տան որոշումը՝ ձեռնամուխ լինել Իրաքից ամերիկյան ռազմուժի մասնակի դուրսբերմանը, նշանակում է ոչ այնքան 2003թ. ձեռնարկված իրաքյան կամպանիայի և դրանով պայմանավորված մերձավորարևելյան քաղաքականության ավարտ, որքան նույն Մերձավոր Արևելքի համար նախատեսված Վաշինգտոնի նոր քաղաքականության մեկնարկ: Խոսուն փաստարկ է այս հուլիսին Պարսից ծոցի արաբական միապետությունների, Եգիպտոսի ու Իսրայելի հետ ԱՄՆ ձեռք բերած պայմանավորվածությունը, ըստ որի՝ առաջիկա 10 տարիների ընթացքում այդ երկրները կստանան ընդհանուր թվով $63 մլրդ-ի ամերիկյան ռազմատեխնիկական մատակարարումներ: Պարզ է, որ նման կարգի տարածաշրջանային նախաձեռնության հիմնական թիրախ Վաշինգտոնում դիտարկում են Իրանը: Սակայն եթե 2003-ից ի վեր ԱՄՆ մերձավորարևելյան քաղաքականության մեջ իրանական հարցն աստիճանաբար ստանում էր ավելի տեսական բնույթ՝ կապված Վաշինգտոնի իրաքյան լուրջ անհաջողությունների հետ, ապա Բուշ-կրտսերի որոշումը՝ սկսել Իրաքում ամերիկյան ռազմուժի կրճատումը, պետք է վկայի, որ արդեն 2009թ. Սպիտակ տուն եկող նոր վարչակազմը ընդհուպ զբաղվելու է իրանական հարցով: Նման պարագայում կողմերի ոչ մեկի հաշվարկից չեն կարող դուրս մնալ Իրանին սահմանակից Հարավային Կովկասն ու, հետևաբար, Ղարաբաղյան հիմնախնդիրը:
- *Եվրոպական գործոն.* 2006թ. նոյեմբերի 14-ին Եվրամիությունը «Եվրոպական հարևանության քաղաքականության» շրջանակում Վրաստանի, Հայաստանի ու Ադրբեջանի հետ կնքեց Գործողությունների ծրագրերը: Թեև նշված ծրագրերով հարավկովկասյան երեք երկրներին ուղղված ԵՄ քաղաքականությունն ունի ժամկետ՝ 5 տարի, բայց ակնհայտ է երկու բան. ԵՄ-ը նոր հարթություն է տեղափոխել Հարավային Կովկասի երկրների հետ իր հարաբերություններն ու տարածաշրջանում սեփական ներգրավվածության ծրագրերը: Հետևաբար, հնգամյա փուլի ավարտին հաջորդելու է մի նոր ժամանակահատված: Այդ պարագայում, ավելի երկարատև ռազմավարության դեպքում, Եվրամիությունում դժվար թե անտեսեն տարածաշրջանին առնչվող ռազմաքաղաքական խնդիրները, որոնց առնչությամբ Եվրոպան մինչև այսօր զբաղեցրել է համեմատաբար պասիվ դիրք:

Սարգիս Հարությունյան
«Նորավանք» հիմնադրամ

ԻՐԱՆ. ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՐՈՇ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՇՈՒՐՋ

2007թ. սեպտեմբերի 5-ին Իրանի նախկին նախագահ Ա.Ա.Խաշեմի-Ռաֆսանջանիի ընտրությունը Փորձագիտական վեհաժողովի նախագահի պաշտոնում և մինչ այդ Իսլամական պահապանների կորպուսի ղեկավարի ազատումը զբաղեցրած պաշտոնից բավական կարևոր իրադարձություններ են Իրանի ներքաղաքական կյանքում: Վերը նշված զարգացումներն Իրանում տեղ գտած որակական փոփոխությունների մասն են կազմում՝ պայմանավորված ԱՄՆ-ի կողմից ռազմուժի կիրառման հնարավորության մեծացմամբ և Իրանի ներսում վարչական ու քաղաքական ռեսուրսի վերաբաշխմամբ: Այս վերաբաշխման գործընթացը, հավանաբար, կարող է պայմանավորված լինել նաև Արևմուտքի՝ Իրանի նկատմամբ մոտեցման կոշտացմամբ:

Հունիս-հուլիսին, Իրան-ԱՄՆ բանակցային գործընթացում որոշակի դրական տեղաշարժերով պայմանավորված, միջազգային լրատվական և վերլուծական շրջանակներում սկսեցին ավելի հաճախ երևալ կարծիքներ ու տեսակետներ այն մասին, թե Իրանում արմատական քաղաքական ուժերի դիրքերը թուլանալու միտում ունեն: Սա առաջին հերթին վերաբերում է նախագահ Մ.Ահմադինեժադի կողմնակիցներին, որոնք բավական համեստ արդյունքների հասան անցած տարի կայացած տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ: Այս հարցերին նվիրված մի վերլուծական հրատարակեց ամերիկյան հանրահայտ *«Foreign Policy»* ամսագիրը, որն ուշագրավ վերնագիր ուներ՝ *«Ahmadinejobless»,* այսինքն՝ «Գործազուրկ Ահմադինեժադ»: Հոդվածի հիմնական տեսակետներից մեկն այն էր, որ Իրանի ներքաղաքական դաշտում նախագահի դիրքերն աստիճանաբար թուլանում են, և դա չի կարելի բացատրել միայն քաղաքական ընտրանու կողմից Ահմադինեժադի քաղաքականության նկատմամբ ոչ այնքան դրական վերաբերմունքով, այլ նաև նրանով, որ բուն իրանական հասարակությունը սկսում է ավելի քննադատաբար գնահատել նախագահին և նրա սոցիալ-տնտեսական քաղաքականությունը:

Նշենք, որ Իրանում տնտեսական և սոցիալական վիճակն, իրոք, չի կարելի բավարար անվանել: Գների աճը տոկոսային առումով երկրում, անցած տարվա կտրվածքով, եղել է ամենաբարձրը վերջին 8 տարիների ընթացքում:

Սակայն միայն տնտեսական և սոցիալական հարցերը չեն, որ պայմանավորում են նախագահի դիրքերի թուլացումը և քաղաքական ռեսուրսի վերաբաշխումը: Նշենք մի քանի իրողություններ, որոնք, մեր կարծիքով, անմիջականորեն ազդում են երկրում քաղաքական իրավիճակի վրա:

Երկրի հոգևոր առաջնորդ Ա.Խամենեիի առողջական վիճակի անորոշությունը. 2006-ին առաջին անգամ հայտնվեցին չհաստատված լուրեր այն մասին, որ Իրանի հոգևոր առաջնորդ Ալի Խամենեին մահացել է: Այդ լուրերը մատնանշում են ոչ թե Իրանի դեմ տեղեկատվական և հոգեբանական պատերազմի ընթացքը, այլ այն իրողությունները, որոնք առկա են երկրի հոգևոր առաջնորդի շուրջ. փաստ է, որ նրա առողջական վիճակը վատ է, և դրա վկայություններից մեկը Ա.Խամենեիի հասարակությանը սակավ հայտնվելն է: Նման իրավիճակը տեսականորեն մի քանի զարգացում և հետևանք կարող է ունենալ.

1. Հոգևոր առաջնորդի մահը կբերի նոր առաջնորդի ընտրության, և այս գործընթացում առաջնային ազդեցություն կունենա ոչ թե Պահապանների խորհուրդը, որը ղեկավարում է Ահմադինեժադին աջակցող Ահմադ Ջանաթին, այլ 86 հոգուց բաղկացած Փորձագետների վեհաժողովը, որը և իրավասու է ընտրել նոր հոգևոր առաջնորդին: Սեպտեմբերի 5-ին Փորձագետների վեհաժողովի նախագահ է ընտրվել Իրանի նախկին նախագահ Ա.Ա.Խաշեմի Ռաֆսանջանին:

2. Հոգևոր առաջնորդի առողջության կտրուկ վատթարացումը տեսականորեն կարող է բերել նրա պաշտոնազրկմանը, և այստեղ նույնպես որոշումներ կայացնող մարմինը Փորձագետների վեհաժողովն է, որը և կընտրի նոր հոգևոր առաջնորդին։
3. Հոգևոր առաջնորդի առողջության վատթարացումը կարող է հանգեցնել նրան, որ կնվազի վերջինիս՝ քաղաքական և տնտեսական գործընթացներին մասնակցությունը։ Եվ նախագահի ազատությունը կարող է ավելի նշանակալի դառնալ, այսինքն՝ Ահմադինեժադը կարող է ավելի ազատ գործել թե՛ ներքաղաքական, թե՛ արտաքին քաղաքական դաշտում։ Այս պարագայում նախագահի ազատության սահմանափակման մարմին կարող է դառնալ խորհրդարանը, որի նոր կազմի ընտրությունները տեղի են ունենալու 2008-ի մարտին։

2008-ի խորհրդարանական և 2009-ի նախագահական ընտրությունները. Ինչպես նշեցինք, 2008-ի մարտին Իրանում տեղի կունենան խորհրդարանական ընտրություններ։ Դրանց արդյունքում երկրում պետք է ավարտվի քաղաքական ուժերի վերադասավորման գործընթացը, որը հիմք կստեղծի նախագահական ընտրությունների շատ թե քիչ կանխատեսելի և կայուն ընթացքի համար։

Սակայն Իրանի քաղաքական ուժերն այսօր դեռևս պայքարում են խորհրդարանական ընտրություններում հաջողության հասնելու համար։ Ինչպիսին կլինի հաջորդ խորհրդարանը՝ թերևս, հնարավոր է մասամբ կանխատեսել. այնտեղ գրեթե չեն լինի, այսպես կոչված, բարեփոխիչների ներկայացուցիչներ, իսկ հիմնական պայքարը կընթանա պահպանողականների և, պայմանականորեն ասած, ծայրահեղ պահպանողականների միջև։ Եթե գնահատականները տրվեն արևմտյան դասական քաղաքագիտական տերմիններով, ապա կարելի է ասել, որ պայքարն ընթանալու է կենտրոնամետների (համախմբված Ռաֆսանջանիի և այլ առաջնորդների շուրջ) և աջ ծայրահեղականների (համախմբված նախագահի, ծայրահեղ հայացքներ կրող այաթոլաների շուրջ) միջև։

Մեր կարծիքով՝ հենց գալիք խորհրդարանական և նախագահական ընտրությունների պայքարի մոտալուտ սկիզբն է հիմք հանդիսացել Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի (ԻՀՊԿ) ղեկավար, գեներալ Յ.Սաֆավիի հեռացման համար։ Գեներալ Սաֆավին երկար տարիներ ղեկավարել է կորպուսը և աչքի է ընկել իսլամական վարչակազմին և հոգևոր առաջնորդին անձնվեր ծառայությամբ։ Օգոստոսին ամերիկյան կողմի հայտարարությունը, թե Վաշինգտոնը ցանկանում է ԻՀՊԿ-ն ընդգրկել ահաբեկչական կազմակերպությունների ցանկում, չի կարող ԻՀՊԿ ղեկավարի պաշտոնանկության հիմք հանդիսանալ. նախ՝ Իրանի կողմից պարզապես նահանջ կլիներ Վաշինգտոնի պատճառով աշխատանքից հեռացնել ԻՀՊԿ ղեկավարին, և երկրորդ՝ կազմակերպության ղեկավարի հեռացումը չի նշանակում կազմակերպության լուծարում և այդ իսկ պատճառով չի կարող ազդել ԱՄՆ հնարավոր որոշումների վրա։ Որ Յ.Սաֆավիի հեռացումը կապված չէ ԱՄՆ դիրքորոշման հետ, ակնհայտորեն երևում է գոնե այն բանից, թե իրեն ինչպես դրսևորեց ԻՀՊԿ նորանշանակ ղեկավար Մահմուդ Ալի Զաֆարին. սեպտեմբերի 10-ին ԻՀՊԿ սպայակույտի հետ հանդիպման ժամանակ նա իր ելույթի նշանակալի մասը նվիրեց հակաամերիկյան հայտարարություններին և Վաշինգտոնի քաղաքականության սուր ու ագրեսիվ քննադատությանը։ Նշենք, որ Մ.Ա. Զաֆարին բրիգադի գեներալ է և ակտիվ մասնակցություն է ունեցել իրանա-իրաքյան պատերազմում։ ԱՄՆ դեսպանատան գրավումից հետո ներիրանական քաղաքական զարգացումներում նա որևէ ակտիվ մասնակցություն չի ունեցել։

Եթե ճիշտ են այն տեղեկությունները, թե Իրանի հոգևոր առաջնորդ Ա.Խամենեին վատառողջ է և սկսելու է ավելի պակաս չափով ազդել երկրի զարգացումների վրա, ապա իրոք առկա է նշանակալի քաղաքական ճգնաժամի հիմք։ Նման ճգնաժամի ծավալման համար ավելի քան հիմնավոր պատճառ կարող են դառնալ հենց խորհրդարանական ընտրությունները, որոնք իսկական պայքարի թատերաբեմի վերածվելու ներուժ ունեն։ Այս պարագայում բավական կարևոր դեր է ունենալու ԻՀՊԿ կողմնորոշումը, որը տիրապետում է քաղաքական գործընթացների վրա ազդելու մեծ պոտենցիալի։ Հոգևոր առաջնորդի հիվանդության կամ պասիվության պարագայում թե ում կպաշտպաներ Յ.Սաֆավին՝ շատ կարևոր հարց է՝ հաշվի առնելով այն, որ Իրանի ներկայիս նախագահը ԻՀՊԿ նախկին սպա է և միշտ էլ վայելել է այս կառույցի աջակցությունը։

Այսպիսով, խորհրդարանական և նախագահական ընտրություններից առաջ ԻՀՊԿ ղեկավարի փոփոխությունը բավական լուրջ ազդեցություն կունենա ընտրությունների ընթացքի վրա և, հավանաբար, հոգևոր առաջնորդի կողմից արված քայլ է՝ ուղղված հին պահպանողականների և նրանց շահերի պաշտպանությանը:

Իրան-ԱՄՆ և Իրան-Արևմուտք հարաբերություններ. Վերը նշված «Գործազուրկ Ահմադինեժադ» հոդվածում կիսալուրջ, սակայն իրականությանը որոշ չափով համապատասխանող տեսակետ է նշվում այն մասին, որ Իրանում ստեղծված ներքաղաքական իրադրության պայմաններում Մ.Ահմադինեժադին իշխանությունը պահելու գործում կարող է օգնել միայն ԱՄՆ նախագահ Ջ.Բուշը: Խոսքն, ընդհանուր առմամբ, այն մասին է, որ ԱՄՆ ռազմատենչ հայտարարությունները և Վաշինգտոնի՝ Իրանի դեմ ռազմուժ կիրառելու հնարավորությունը որոշակի օբյեկտիվ և արդարացված հիմք են ստեղծում Մ.Ահմադինեժադի իշխանության պահպանման համար: Կարո՞ղ է արդյոք Իրանի նախագահը գնալ ԱՄՆ-ի հետ հակամարտության սրացման սեփական իշխանությունը պահպանելու համար հարցին անգամ հարաբերական վստահությամբ պատասխանել չի կարելի. Իրանում բավական բարդ են ներքաղաքական իրավիճակը՝ մասնավորապես և յուրահատուկ իրանական քաղաքական մշակույթը՝ ընդհանրապես:

Սակայն փաստ է, որ արտաքին աշխարհի հետ շատ թե քիչ բարիդրացիական հարաբերություններ ունենալու մեջ շահագրգիռ իրանական քաղաքական և տնտեսական շրջանակները, մանավանդ նրանք, ում ֆինանսական և տնտեսական բարեկեցությունը կախված է արտերկրի հետ հարաբերություններից ու համագործակցությունից, լրջորեն տուժում են թե՛ Մ.Ահմադինեժադի ներքին սոցիալական քաղաքականությունից, թե՛ արտաքին քաղաքականությունից, որի արդյունքում շուտով Իրանի տնտեսության միակ ոլորտը, որը չի ենթարկվի միջազգային պատժամիջոցներին, կդառնա նավթի արտահանումը, որն առանց այդ էլ հիմնականում ղեկավարվում է պետության կողմից:

Այս պարագայում Իրանի ներկա ներքաղաքական վերադասավորումները կարող են արդյունք լինել այն անհանգստության, որն առկա է ԱՄՆ-ի և արտաքին աշխարհի հետ հարաբերություններում: Այս վերադասավորումները, որոնք գալիք խորհրդարանական և նախագահական ընտրությունների նախապատրաստությունն են, կարող են բերել Իրանի արտաքին քաղաքական գծի և մասամբ դրա մաս կազմող միջուկային քաղաքականության վերիմաստավորման: Միևնույն ժամանակ, չի կարելի բացառել, որ Արևմուտքի կողմից Իրանի նկատմամբ մոտեցման խստացումը բացատրվում է նաև իսլամական հանրապետության ներսում ընթացող ներքաղաքական զարգացումների վրա ազդելու ցանկությամբ: Հարկ է նշել, որ Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար Բեռնար Կուշների հայտարարությունն Իրանի դեմ ռազմական ուժ կիրառելու հնարավորության մասին իրանական մամուլում քննադատության նոր ալիք բարձրացրեց Իրանի նախագահի արտաքին քաղաքականության նկատմամբ: Ինքը՝ Մ.Ահմադինեժադը, սեպտեմբերի 19-ին իրանական լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ ֆրանսիացի նախարարի խոսքերը յուրովի է մեկնաբանել. պատասխան կամ ռազմատենչ հայտարարությունների փոխարեն նա ասել է, որ Կուշների խոսքերի իմաստը թյուր ձևով է տարածվել լրատվամիջոցների կողմից:

Ակնհայտ է, որ Իրան-ԱՄՆ հարաբերությունների անսպասելի և արագ բարելավման մասին խոսք անգամ լինել չի կարող. միջպետական հակամարտության հիմքում ընկած է ոչ թե իրանական վարչակարգի բնույթը կամ քաղաքականությունը, այլ այն, որ Իրանն արդեն իսկ դարձել է ԱՄՆ թիվ 1 մրցակիցը Մերձավոր Արևելքում ազդեցության աճի և պահպանման համար մղվող պայքարում:

Ունենալով հիմնականում պետական նշանակության պատճառներ՝ ներքաղաքական զարգացումներն Իրանում Թեհրանի տարածաշրջանային քաղաքականության նշանակալի փոփոխությունների չեն հանգեցնի: Սա վերաբերում է նաև Հարավային Կովկասին և Հայաստանին, որտեղ Իրանի ներկայիս քաղաքական գիծն արտացոլում է Թեհրանի բնական շահերի պաշտպանության քաղաքականությունը:

Մնակ Սարուխանյան
«Նորավանք» հիմնադրամ

ՎՐԱՍՏԱՆՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇԵՄԻՆ

2008-2009 թվականները անցումային կամ բեկումնային կլինեն վրաստանյան զարգացումների համար: Նախ՝ հաջորդ տարի երկրում նախատեսվում են խորհրդարանական և նախագահական ընտրություններ, երկրորդ՝ 2009թ., ինչպես երկրի ղեկավարությունն է հայտարարում, Վրաստանը պատրաստ կլինի անդամակցել ՆԱՏՕ-ին: Վրաստանում ժողովրդավարական ընտրությունների անցկացումը Հյուսիսատլանտյան դաշինքին երկրի անդամակցության կարևորագույն երաշխիքներից է, ինչին լուրջ ու հետևողական մոտեցում են ցուցաբերում եվրաատլանտյան հիմնական դերակատարները: Մյուս կողմից՝ ընտրությունների արդյունքները, ինչպես և Վրաստան-ՆԱՏՕ հարաբերությունների խորացման հարցը առանցքային նշանակություն ունեն Ռուսաստանի հարավկովկասյան քաղաքականության համատեքստում: Ուստի, կարելի է հաստատել, որ նախընտրական զարգացումները Վրաստանում կանցնեն արտաքին շահերի խտացման մթնոլորտում:

Ամերիկյան մոդել

«Վարդերի հեղափոխությամբ» նոր էջ բացվեց եվրաատլանտյան կառույցներին Վրաստանի ինտեգրման գործընթացում: Առավել դինամիկ զարգացում ստացան հատկապես Վրաստան-ԱՄՆ ռազմաքաղաքական հարաբերությունները: 2003թ. նոյեմբերյան իշխանափոխությամբ երկրի արտաքին քաղաքականությունը դարձավ առավել միաբևեռ. առաջին պլան մղվեց «ամերիկյան մոդելը»: Վրաստանի արտաքին քաղաքականությունում ամերիկյան քաղաքական, ռազմաքաղաքական գերակայությունն այսօր ևս շարունակվում է: Նոյեմբերյան իշխանափոխությունից հետո նախագահ Մ.Սահակաշվիլին, չնայած Վաշինգտոնում նրանից որոշակի դժգոհություններին, շարունակում է ստանալ ԱՄՆ կառավարության հովանավորությունը: Նրան էլ հենց կցանկանային տեսնել Վրաստանի հաջորդ նախագահի դերում:

Պտտվող լուրերի համաձայն՝ Վաշինգտոնում, որպես Սահակաշվիլու հնարավոր այլընտրանք, «նախապատրաստում» են նախկին պաշտպանության նախարար Իրակլի Օկրուաշվիլու թեկնածության առաջադրումը: Ասում են՝ վերջինս ընդդիմադիր կուսակցություն է ստեղծում[1]: Նման սցենարը կարելի է տրամաբանական համարել Վրաստանի նախագահի պաշտոնում ռազմական ներկայացուցչի թեկնածության հաստատման առումով՝ 2008թ. մարտին ՌԴ նախագահական ընտրություններին ուժային ներկայացուցչի՝ Սերգեյ Իվանովի առաջադրման համատեքստում:

Սակայն Վաշինգտոնում գիտեն Օկրուաշվիլու տաքարյուն խառնվածքի, զգացմունքայնության մասին, ուստի, համենայնդեպս ներկայումս, Սահակաշվիլին շարունակում է մնալ երկրի հաջորդ նախագահի հնարավոր թեկնածուն: Գալիք նախագահական ընտրություններին Սահակաշվիլու փոփոխությունը նոր դրսևորումներ կարող է ստանալ, մասնավորապես, ռուս-վրացական հարաբերությունների ընդհանուր տրամաբանության մեջ, ինչը, փաստորեն, այնքան էլ դրականորեն չի ընկալվում Վաշինգտոնում (Օկրուաշվիլու առաջադրման պարագայում ռուս-վրացական դիվանագիտական հարաբերությունները կմտնեն փակուղի): Մյուս կողմից՝ որոշակի հետընթաց կարող է նկատվել նաև Վրաստան-ՆԱՏՕ համագործակցության զարգացման և կազմակերպությանը երկրի անդամակցության գործում:

Ամերիկյան կողմը նախընտրական փուլում կարող է աջակցություն ցուցաբերել Օկրուաշվիլուն, թերևս, որպես հավասարակշռող գործոն՝ Սահակաշվիլու գործողությունները և քաղաքական գիծը ամերիկյան ազդեցության ներքո պահելու նպատակով:

Սահակաշվիլու միակ հնարավոր մրցակիցը համարվում էր նախկին վարչապետ Զուրաբ Ժվանիան, որի հեղինակությունը բավական բարձր էր և՛ Միացյալ Նահանգներում, և՛ ընդհան-

[1] Ըստ որոշ աղբյուրների՝ կուսակցությունն անվանվելու է «Վրաստանն առանց Միխայիլ Սահակաշվիլու»:

բապես միջազգային ասպարեզում: Ներկայումս Վրաստանում չկա ընդգծված ու ազդեցիկ այնպիսի քաղաքական դեմք, որը հավասարակշռեր նախագահ Սահակաշվիլուն՝ լինելով նրա թիմակիցը, սակայն, միևնույն ժամանակ, չգտնվելով նրա ազդեցության տակ, և ստանար Վաշինգտոնի աջակցությունը. հանգամանք, որը գործում էր Վաշինգտոն-Ժվանիա-Սահակաշվիլի ձևաչափում: Իհարկե, կարելի է առանձնացնել նաև խորհրդարանի խոսնակ Նինո Բուրջանաձեին, որի հեղինակությունը բավական բարձր է երկրի քաղաքական-հասարակական կյանքում, սակայն երկրի ներիշխանական համակարգում նրա դիրքերն էապես թուլացան հատկապես Ժվանիայի մահվանից հետո[1]: Վերջին մեկուկես տարում Բուրջանաձե-Սահակաշվիլի հակասություններն առավել խորացան, ինչի արդյունքում խորհրդարանի նախագահը, ըստ էության, աստիճանաբար դուրս մղվեց իշխանական թևից[2]: Ամերիկյան կողմը նախկինում նույնպես Նինո Բուրջանաձեի անվան հետ լուրջ հույսեր չի կապել, և ներկայումս էլ Վաշինգտոնի դիրքորոշման փոփոխությունը կարող է, նախ, հանգեցնել իշխանության խորհրդարանական թևի ազդեցության մեծացման՝ ի հաշիվ նախագահականի կամ գործադիրի, և երկրորդ՝ այդ քայլը կխախտի ներիշխանական ապարատում արդեն ձևավորված ուժային փոխդասավորությունը:

Եվրոպական գործոն

Վրաստանի ներքաղաքական զարգացումներում եվրոպական վեկտորն էապես զիջում է ամերիկյանին՝ սահմանափակվելով գերազանցապես տնտեսական-քաղաքական և ռազմական ոլորտներով: Ասել է թե՝ ի տարբերություն ամերիկյանի, եվրոպական գործոնը չի տիրապետում պոտենցիալ լծակների՝ երկրի ներքաղաքական կամ ներիշխանական համակարգում առարկայական ազդեցություն թողնելու առումով:

Վրաստանի ներքաղաքական կյանքում ներգրավված եվրոպական ընդհանուր վեկտորում առավել դինամիկ է զարգանում, մասնավորապես, քաղաքական համագործակցությունը ֆրանսիական կողմի հետ: Վերջինս, թերևս, միակ գործոնն էր, որ կարող էր մասնակիորեն հավասարակշռվել (սխալ կլինի ասել՝ մրցակցել) ամերիկյան կողմի հետ: Հայտնի է, որ Վրաստանում ֆրանսիական վեկտորի «համախմբումն» իրականացնում էր նախկին արտգործնախարար Սալոմե Զուրաբիշվիլին: Նախքան Վրաստանի ԱԳ նախարարի պաշտոնը զբաղեցնելը, նա Վրաստանում Ֆրանսիայի դեսպանն էր: Սակայն 2005թ. հոկտեմբերի 19-ին նա հեռացվեց արտգործնախարարի պաշտոնից և անցավ ընդդիմության շարքերը: Վերլուծաբանների զգալի մասը հակված է այն տեսակետին, որ Զուրաբիշվիլու հեռացումը վկայում էր ամերիկյան դիրքերի ամրապնդման մասին՝ վրաստանյան քաղաքական զարգացումներում ԵՄ-ԱՄՆ հակասությունների սրացման արդյունքում: Կարելի է հաստատել, որ Վրաստանի արտգործնախարարի պաշտոնից Զուրաբիշվիլու ազատումը բացասաբար անդրադարձավ ֆրանսիական քաղաքական դիրքերի պահպանման վրա, ինչի ականատեսն ենք այսօր:

Թուրքական վեկտոր

Որոշ փորձագետների կարծիքով՝ «վարդերի հեղափոխությունից» հետո Վրաստանի քաղաքական դաշտում, ի հաշիվ ամերիկյան գործոնի, առավել մեծացել է հատկապես Թուրքիայի ազդեցությունը: Վրաց-թուրքական հարաբերությունների խորացումն ընթանում է նաև ի հաշիվ Ռուսաստանի հետ Վրաստանի հարաբերությունների վատթարացման: Չնայած դրանք արդեն ռազմավարական համագործակցության մակարդակի են հասել, այնուհանդերձ, Վրաստանի ղեկավարությունը մի շարք կարևոր հարցերում վերապահումներով է մո-

---

[1] Սահակաշվիլու «մենիշխանությունը» հավասարակշռում էր Ժվանիա-Բուրջանաձե երկյակը:

[2] Ս.թ. օգոստոսի վերջին երկրի կառավարությունում իրականացվեցին վերադասավորումներ (փոխվեցին ֆինանսների, էներգետիկայի և արդարադատության նախարարները): Թեկնածուների ընտրության հարցին նվիրված խորհրդակցություններին Բուրջանաձեն ընդգրկված չէր, ինչը լուրջ տարաձայնություններ առաջացրեց վերջինիս և Սահակաշվիլու միջև: Փորձագետների մի մասը հակված է միջադեպը պայմանավորել իշխանությունում Բուրջանաձեի դիրքերի թուլացման՝ նախագահական թիմի քաղաքականությամբ: Սա նոյեմբերյան իշխանափոխությունից հետո երկրի նախագահի որոշումներին Բուրջանաձեի բացահայտ հակադրության երկրորդ դեպքն էր. առաջինը 2005թ. էր, երբ խորհրդարանի խոսնակը սուր քննադատության ենթարկեց նրան երկրի վարչապետի պաշտոնում Զ.Նոգաիդելիի առաջադրման կապակցությամբ:

տենում երկկողմ հարաբերությունների զարգացման հեռանկարներին[1]: Այս տեսանկյունից նույնպես վրաստանյան ներքաղաքական համակարգում թուրքական գործոնն ազդեցության բավական նեղ տիրույթներ ունի: Վրացական կողմը Թուրքիայի հետ համագործակցության ընդլայնումը գերազանցապես պայմանավորում է նախ Վրաստան-ՆԱՏՕ հարաբերություններով և երկրում գործող հակամարտությունների կարգավորման խնդիրներով: Երկրորդ՝ Թուրքիայի հետ հարաբերությունների ամրապնդումը երկրի ղեկավարությունը հարավկովկասյան տարածաշրջանում Ռուսաստանի դիրքերի թուլացման լուրջ քայլ է համարում:

Ռուսական գործոն

Վրաստանում 2003թ. նոյեմբերյան իշխանափոխությունից հետո էապես թուլացան երկրի ներքաղաքական ապարատի կամ որոշումների ընդունման մեխանիզմների վրա ռուսական կողմի ներազդման առարկայական լծակները: Իսկ Աջարիայի ինքնավարության նախկին առաջնորդ Ասլան Աբաշիձեի հեռացմամբ ռուսական քաղաքական ազդեցությունն ավելի սահմանափակվեց: Արդյունքում՝ ի տարբերություն Վրաստանի տնտեսությունում ռուսաստանյան կապիտալի ակտիվացման ներկայիս տեմպերի, երկրի ներքաղաքական համակարգի վրա ռուսական քաղաքական գործոնի ազդեցության մակարդակը պայմանավորված է ռուս-վրացական սառը հարաբերությունների ընդհանուր տրամաբանությամբ՝ ուղեկցվելով փոխադարձ սադրանքներով կամ առճակատումներով: Ուստի, ասել, թե վրաստանյան ներքաղաքական դաշտում ռուսական վեկտորը գրեթե չի գործում, այնքան էլ իրատես չէ: Խնդիրը վերաբերում է քաղաքական՝ բացառապես ռիսկային ինչ-ինչ հանգամանքների, որոնք Վրաստանի նախընտրական փուլում, չի բացառվում, որ ունենան որոշակի ազդեցություն կամ նպաստեն ընթացակարգի փոփոխություններին: Մյուս կողմից՝ ռուսական կողմի հետ կարող են համագործակցել հատկապես Վրաստանի այն ուժերը կամ քաղաքական գործիչները, որոնք ժամանակին մասնակցություն են ունեցել նոյեմբերյան իշխանափոխությանը, սակայն այժմ կամ ամբողջությամբ լքել են իշխանական թևը, կամ իշխանական ճամբարում ունեն ստվերային (երկրորդային) կարգավիճակ: Առաջարկվող տրամաբանությունից հեռու չէ խորհրդարանի նախագահ Նինո Բուրջանաձեի քաղաքական կերպարը, որը շարունակում է մնալ իշխանական ճամբարում՝ լուրջ խնդիրներ ունենալով նախագահական թևի հետ: Բուրջանաձեն լուրջ քաղաքական-իշխանական հակասություններ ունի նաև խորհրդարանական մեծամասնության հետ, որոնք գտնվում են Սահակաշվիլու ազդեցության ներքո: Չի բացառվում, որ նախընտրական շրջանում Բուրջանաձեն համագործակցություն հաստատի ռուսական կողմի հետ:

Եզրահանգումներ

Վաշինգտոնում կարևորում են Վրաստանի քաղաքական, ռազմաքաղաքական կայունության պահպանումը՝ մանավանդ ընտրությունների նախաշեմին: Ժողովրդավարական ընտրությունների անցկացումը կհարթի Վրաստանի՝ ՆԱՏՕ-ին ինտեգրման ճանապարհը, և ամերիկյան կողմը, թերևս, կապահովի այն ամենը, ինչ անհրաժեշտ է Վրաստանում նախընտրական հնարավոր ցնցումներից խուսափելու համար: Գալիք ընտրություններին ներկայիս իշխանության պահպանումը, հետևաբար և՝ Վրաստան-ՆԱՏՕ համագործակցության խորացումը ահազանգ են պաշտոնական Մոսկվային: Այդ պարագայում վերջինս կարող է լուրջ խնդիրներ ունենալ Հարավային Կովկասում ռուսական ռազմաքաղաքական դիրքերի պահպանման և տարածաշրջանի անվտանգության հնարավոր այլ ձևաչափում իր ներկայությունն ապահովելու հարցում[2]:

Կարեն Վերանյան
«Նորավանք» հիմնադրամ

---

[1] Առաջինը թուրք մսխեթցիների Վրաստան վերադարձի հարցն է, որով շահագրգռված է թուրքական կողմը, և երկրորդ՝ վրաց-թուրքական համագործակցության խորացման հարցի նկատմամբ զգուշավորություն են ցուցաբերում Վաշինգտոնում:
[2] Հարցն ընդգրկում է նաև Վրաստանում առկա հակամարտությունների կարգավորման ձևաչափերի փոփոխության, ինչպես և խաղաղապահ առաքելության խնդիրներն ընդհանրապես:

ԻՍԼԱՄԱԿԱՆ ԱՐՄԱՏԱԿԱՆԱՑՄԱՆ ՎՏԱՆԳ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՍԻԱՅՈՒՄ

Կենտրոնական Ասիայի հիմնական կրոնն իսլամն է, որն այստեղ է ներթափանցել 7-8-րդ դարերում արաբների արշավանքների ժամանակ, ինչի արդյունքում տարածաշրջանի մի զգալի հատվածը մաս է կազմել արաբական խալիֆայության: Կենտրոնական Ասիան ավանդականորեն համարվել է իսլամական մշակույթի և գիտության կարևորագույն կենտրոն:

ԽՍՀՄ փլուզումից հետո Կենտրոնական Ասիայում իսլամի արմատավորումն ընթացավ տեղական պայմաններին հատուկ հանգամանքներում՝ առանձին դեպքերում կրելով միջազգային իսլամական կենտրոնների և տարածաշրջանային բարդ գործընթացների ազդեցությունը:

Կենտրոնաասիական հանրապետություններում իսլամը ներկայացված է հիմնականում սուննի ուղղությամբ, տարածված է նաև շիա, ինչպես նաև ժողովրդական իսլամը, ինչը նկատի է առնում սուֆիական եղբայրությունների գործունեությունը:

Տարածաշրջանի բնակչության մեծ մասն իրեն համարում է մահմեդական՝ չնայած սեփական կրոնի ոչ համապարփակ իմացությանը: Հատկանշական է, որ ցեղային ավանդույթն էապես նպաստել է տեղական իսլամի գործառույթին:

Ի դեպ, այսօր Կենտրոնական Ասիայում՝ կապված խորհրդային շրջանի կրոնական և ազգային քաղաքականության սահմանափակումների հետ, իսլամը հիմնականում պայմանավորում է հասարակության ավանդութային ու կենցաղային կողմերը և սոցիալ-քաղաքական կյանքում դեռևս մեծ դերակատարում չունի:

Այդուհանդերձ, Կենտրոնական Ասիայում իսլամի վերածնունդը նոր իրողություններ մտցրեց տեղական հասարակությունների կյանքում: Շատ երիտասարդներ մեկնեցին իսլամական երկրներ՝ կրոնական կրթություն ստանալու, մեծ հետաքրքրություն առաջացավ արաբերենի նկատմամբ, ավելացավ մզկիթների, կրոնական դպրոցների՝ մեդրեսեների և իսլամական բարձրագույն համալսարանների թիվը, իրենց գործունեությունը սկսեցին ակտիվացնել իսլամական միսիոներները:

Անկախության ձեռքբերումից հետո կենտրոնաասիական հանրապետություններում աստիճանաբար սեփական հետաքրքրությունները սկսեցին հետապնդել տարածաշրջանային և միջազգային մի շարք ուժեր, այդ թվում՝ Ռուսաստանը, ԱՄՆ-ը, Թուրքիան, Իրանը, Պակիստանը, Չինաստանը, Սաուդյան Արաբիան, Իսլամական կոնֆերանսի անդամ այլ երկրներ, ինչպես նաև առանձին եվրոպական պետություններ:

Հիշյալ խնդրի իրականացման համար կարևորագույն գործոն էր հենց իսլամը: Այս համատեքստում տարածաշրջանի նկատմամբ հետաքրքրություն ունեցող պետություններն, ընդհանուր առմամբ, ներկայացնում էին երկու խումբ: Առաջին խումբը կողմ էր կենտրոնաասիական երկրների որոշակի իսլամականացմանը կամ սեփական մոդելի նմանությամբ զարգացմանը (Իրան, Թուրքիա, Սաուդյան Արաբիա, Պակիստան): Մինչդեռ մյուս խումբը՝ ԱՄՆ, եվրոպական երկրներ, Ռուսաստան, Չինաստան, Իսրայել, կողմ էր, որ տարածաշրջանի պետությունները զարգանան աշխարհիկ իսլամական մոդելով:

Անկախության հռչակման առաջին իսկ օրվանից կենտրոնաասիական երկրների ղեկավարները, որոնց մեծ մասի նախկին գործունեությունն առնչվում էր կոմունիստական շրջանի հետ, հայտարարեցին իրենց կապվածությունը զարգացման աշխարհիկ ուղուն, ինչը հետագայում ամրագրվեց այդ երկրների սահմանադրություններում:

Առհասարակ, կենտրոնաասիական կառավարությունները հետամուտ են երկու հիմնական խնդրի: Առաջին. վերահսկել քաղաքական իսլամի (չափավոր, թե արմատական) ընդլայնումը՝ պաշտոնական իսլամից դուրս իսլամի ցանկացած դրսևորում դիտարկելով որպես սպառնալիք պետական համակարգին և անվտանգությանը: Երկրորդ. օգտագործել իսլամը՝ հիմնավորելու իշխանության լեգիտիմությունը, գաղափարներն ու ծրագրերը:

Սակայն այսօր էլ տարածաշրջանի պետությունների քաղաքական դաշտում գործում են ուժեր, որոնք կողմնորոշված են դեպի իսլամի քաղաքական գաղափարախոսությունը: Իսլամիստների առաջին լուրջ դրսևորումը տեղի ունեցավ Ուզբեկստանում, որտեղ ենթարկվելով բռնությունների՝ նրանք տեղափոխվեցին Տաջիկստան, այնտեղից էլ՝ Աֆղանստան. այստեղ ձևավորվեց «Տալիբանի» աջակցությունը վայելող «Ուզբեկստանի իսլամական շարժումը»: 1990-ականների սկզբներին Ուզբեկստանում իր գործունեությունը սկսեց ծավալել նաև Մերձավոր Արևելքի արաբական մի շարք երկրներում գործող «Հիզբ ութ-թահրիր ալ-իսլամի» իսլամիստական կազմակերպության մասնաճյուղը, որն այդտեղից տարածվեց հարևան երկրներ:

Իսլամական գործոնը զգալի դերակատարություն ունեցավ Տաջիկստանի քաղաքական կյանքում հատկապես քաղաքացիական պատերազմի (1992-1997) շրջանում: Ընդդիմությունը ղեկավարում էր «Իսլամական վերածննդի կուսակցությունը» (ԻՎԿ): Հատկանշական է, որ կուսակցությունն իր գործունեությունը սկսել էր դեռևս գորբաչովյան շրջանում՝ 1980-ականներին, և նպատակ ուներ բարձրացնել խորհրդային մահմեդականների իսլամական ինքնությունը, մեկ միասնական դիրքորոշում մշակել կոմունիստական վարչակարգի դեմ: 1997-ին կնքված հաշտության պայմանագրով, ճիշտ է, ԻՎԿ-ն լեգիտիմացվեց, սակայն զգալիորեն թուլացավ՝ հօգուտ նախագահ Է.Ռահմոնովի, ով ամրապնդեց իր դիրքերն իշխանական լծակներում: ԻՎԿ-ն Տաջիկստանում պաշտոնապես գրանցված է որպես իսլամական կուսակցություն, ինչը հազվադեպ երևույթ է Կենտրոնական Ասիայի պարագայում:

Իսլամական գործոնի ազդեցությամբ Ղրղզստանում և Ուզբեկստանում 1999-2000թթ. ռազմական գործողություններ իրականացրեց «Ուզբեկստանի իսլամական շարժումը», իսկ 2004թ. ահաբեկչական գործողություններ տեղի ունեցան Ուզբեկստանի մայրաքաղաքում:

Այսօր կենտրոնաասիական հանրապետությունների կառավարություններին կից գործում են կրոնական գործերով զբաղվող մարմիններ, որոնք պատասխանատու են կրոնական կազմակերպությունների և մզկիթների գրանցման ու գործունեության վերահսկման համար: Առանց հիշյալ կառույցի թույլտվության կրոնական գործունեությունը չի կարող օրինական լինել: Պետությունը գործուն դերակատարություն ունի նաև կրոնական առաջնորդների նշանակման հարցում և վերահսկում է նաև բարձրաստիճան հոգևորականությանը և պաշտոնական իսլամի կառույցները: Նման մոտեցումն առանձին դեպքերում համարժեք չի ընկալվում: Կան իմամներ, ովքեր կառավարության միջամտությունը կրոնական գործերին ոչ միշտ են համարում ընդունելի և շատ դեպքերում ձգտում են ազատ գործունեության, ինչի համար հետապնդվում են: Մինչդեռ իշխանությունները նմանօրինակ քայլերը հիմնավորում են արմատական իսլամիզմի նկատմամբ վերահսկողություն հաստատելու անհրաժեշտությամբ:

Իսլամական կրթության և գիտելիքի մակարդակը տարածաշրջանի երկրներում, ընդհանուր առմամբ, ցածր է: Մեդրեսեները շատ դեպքերում անմխիթար վիճակում են, իսկ հոգևոր սպասավորները՝ մասնավորապես մոլլաները, հիմնականում կիսագրագետ են: Այս համատեքստում ժողովրդականություն կարող են ունենալ միսիոներները, որոնց քարոզներն առավել համոզիչ են թվում:

Կան կանխատեսումներ, որ առաջիկայում տարածաշրջանում իսլամի քաղաքականացումը կարող է առավել ակտիվ փուլ մտնել, ինչը հիմնականում պայմանավորված կլինի ոչ այնքան քաղաքական, որքան սոցիալական և տնտեսական գործոններով, ինչպես նաև գլոբալացման գործընթացներով: Տեսակետներ կան նաև այն մասին, որ ահաբեկչական գործողությունների հնարավորությունը նույնպես մեծանալու է, քանի որ տեղի է ունենում ահաբեկչական ենթակառուցվածքների աստիճանական ձևավորման գործընթաց:

Ներկայումս Կենտրոնական Ասիայում գործում են միջազգային ահաբեկչական կազմակերպությունների մի շարք մասնաճյուղեր և տեղական արմատական կառույցներ: Դրանցից են՝ «Ալ-կաիդան», «Հիզբ ութ-թահրիրը», «Ուզբեկստանի իսլամական շարժումը», «Արևելյան Թուրքեստանի իսլամական կուսակցությունը», «Քրդական ազգային կոնգրեսը», «Ասբատ ալ-անսարը», «Մուսուլման եղբայրները», «Բոզ գուրդը», «Կենտրոնական Ասիայի մոջահիդների միությունը», «Լաշքարի թայբան», «Սոցիալական բարեփոխումների միությունը», «Տալիբանը», «Թաբլիղի ջամաաթը» և այլն, որոնց գործունեությունը որոշակիորեն ակտիվացավ սեպտեմբերի 11-ից հետո:

Առանձին փորձագետների համոզմամբ՝ շուրջ 55 միլիոն բնակչություն ունեցող տարածաշրջանում ամենավտանգավոր ընդհատակյա իսլամիստական կազմակերպությունը «Հիզբ ութ-թահիրիրն» է, որի գաղափարախոսության հիմքում ընկած է աշխարհիկ վարչակարգերի տապալման ու իսլամական տիպի պետությունների ստեղծման գաղափարը՝ հանուն արդարության և բարեկեցության վերականգնման: Վերջնական նպատակը տարածաշրջանում իսլամական խալիֆայության ստեղծումն է: Կազմակերպության հռետորականության մեջ մեծ տեղ են զբաղեցնում հակաամերիկյան քարոզչությունը, Արևմուտքի դեմ սրբազան պատերազմի կոչերը: Փորձագիտական տվյալների համաձայն՝ Կենտրոնական Ասիայում «Հիզբ ութ-թահիրիր» շարժման անդամների թիվը 15-20.000 է: Նրա գործունեության հիմնական արեալը Ֆերգանայի հովիտն է:

Ուզբեկական իշխանությունները շարժումը մեղադրում են 2004թ. Տաշքենդի պայթյունների կազմակերպման և 2005թ. Անդիջանի հայտնի դեպքերին մասնակցություն ունենալու մեջ: Շարժումն ակտիվ գործունեություն է ծավալում նաև Ղրղզստանում: Միայն 2006թ. շուրջ 3000 մարդ է հավատարմագրվել այդ կառույցին, որը, որպես կանոն, գործում է խիստ գաղտնի: Շարժումն ունի տպագրություն, և մեծ տպաքանակով գրականություն ու թռուցիկներ են հրատարակվում:

Տարածաշրջանում իսլամիստական կազմակերպությունների գործունեությանն էապես նպաստում են մի շարք գործոններ՝ սոցիալական բևեռացումը, գործազրկությունը, աղքատությունը, կոռուպցիան, սահմանների թափանցիկությունը, միջէթնիկ հակասությունները և, վերջապես, աշխարհաքաղաքական հարևանությունը քաղաքական առումով ոչ կայուն տարածաշրջանների՝ Կովկասի, Աֆղանստանի, ույղուրական Սինցզյանի հետ: Այս հանգամանքները տարածաշրջանը դարձնում են ավելի խոցելի:

Իսլամիստական կազմակերպությունների գործունեության կարևոր ասպեկտներից մեկը սոցիալական ուղղվածությունն է: Վերջիններս բարեգործական տարբեր ծրագրեր են իրականացնում անապահով շրջաններում, մասնավորապես գյուղական բնակավայրերում՝ առաջին հերթին ձգտելով աջակցել գործազուրկ և անապահով երիտասարդներին, այդպիսով շահելով զանգվածների համակրանքը:

Կենտրոնական Ասիայի հանրապետությունների վարչակարգերի ներքին քաղաքականության ամենաբնորոշ և ընդհանուր գծերից մեկը անողոք և անզիջում պայքարն է իսլամական արմատական ուժերի դեմ: Սակայն, չնայած շոշափելի արդյունքներին՝ իշխանություններին այդպես էլ չի հաջողվում արմատախիլ անել իսլամիստական այլախոհական շարժումները, ինչը կապված է մի շարք հանգամանքների հետ: Մի կողմից հենց բռնություններն են, որ նպաստում են շարժումների ընդլայնմանը և հետագա արմատականացմանը, մյուս կողմից՝ իշխանությունների սոցիալ-տնտեսական անհաջող քաղաքականությունը չի նպաստում այդ երևույթի հաղթահարմանը:

2007թ. հունվարի 11-ին ԱՄՆ Ազգային հետախուզության ծառայության այդ ժամանակվա ղեկավար Ջ.Նեգրոպոնտեն, ներկայացնելով երկրի անվտանգությանն առնչվող գլոբալ ռիսկերը, առանձնացրեց կենտրոնասիական հանրապետությունները: Նա նշեց, որ բռնությունները, քաղաքական լճացումն ու կոռուպցիան, որ բնորոշ են այդ երկրների վարչակարգերին, նպաստավոր պայմաններ են ստեղծում արմատական իսլամական տրամադրությունների և շարժումների ձևավորման համար: Այս հանգամանքը, ԱՄՆ տեսանկյունից, կասկածի տակ է դնում այդ երկրների հուսալիությունը էներգետիկ և հակահաբեկչության դեմ պայքարի համագործակցության ոլորտներում:

Կենտրոնական Ասիայի գծով մասնագետ Մարթա Բրիլ Օլքոտի կարծիքով՝ ԱՄՆ-ը միայն սեպտեմբերի 11-ից հետո առավել հստակ գիտակցեց Կենտրոնական Ասիայի ռազմավարական նշանակությունը, իսկ մինչ այդ տարածաշրջանը Վաշինգտոնի համար հետաքրքրություն էր ներկայացնում սոսկ Կասպիական շրջանի էներգետիկ պաշարների առումով: Սեպտեմբերի 11-ից հետո ԱՄՆ-ը տարածաշրջանում իր ազդեցության մեծացմանն ուղղված քայլեր արեց, ինչը, սակայն, չէր կարող արդարացնել տարածաշրջանի վարչակարգերի սպասելիքները, որոնց քաղաքական կողմնորոշումներում Ռուսաստանն աստիճանաբար տիրապետող դարձավ: Իշխանություններն, իրենց հերթին, չկարողացան հաջողությամբ իրակա-

նացնել քաղաքական և տնտեսական բարեփոխումները: Արդյունքում՝ տարածաշրջանում պարարտ հող գտան իսլամիստական ուժերը:

Ակնհայտ է, որ Կենտրոնական Ասիան վերջին շրջանում որոշակիորեն իսլամականացել է: Իսլամը որոշ չափով տիրապետող է դարձել մասնավորապես սոցիալական ոլորտում: Մեծացել է հեջաբ (իսլամական գլխաշոր) կրողների, ինչպես նաև իսլամական ծիսակարգին հետևողների թիվը, բացվել են «հալալ» սիստեմի խանութներ (որտեղ իսլամական սնունդ է վաճառվում), իսկ Մեքքա ուխտի գնալը տարածում է գտել թե՛ հասարակ ժողովրդի, թե՛ պաշտոնյաների շրջանում: Հարսանիքները նույնպես առավելաբար սկսել են անցկացվել իսլամական ձևով, ինչը նկատի է առնում խնջույքին կանանց և տղամարդկանց առանձին նստելը, ալկոհոլային խմիչքների ու բարձր երաժշտության արգելքը:

Հատկանշական է, որ վերջերս Ղազախստանում կանանց թույլատրվել է անձնագրի համար լուսանկարվել գլխաշորով: Տաջիկստանում շատ դեպքերում նման թույլտվություն տալիս են, մինչդեռ Թուրքմենստանում, Ուզբեկստանում և Ղրղզստանում կանայք նման թույլտվություն դեռևս չունեն: Իշխանություններն ակտիվորեն պայքարում են, որպեսզի աղջիկները կրթական հաստատություններում գլխաշոր չկրեն: Տաջիկստանում և Ղրղզստանում արձանագրվեցին դեպքեր, երբ ուսանողուհիները գերադասեցին հրաժարվել կրթությունից, բայց ոչ՝ գլխաշորից: Գլխաշոր կրելու թույլտվություն ստանալու տեսանկյունից հետաքրքրական է 2007թ. հուլիսին Օտար լեզուների տաջիկական ինստիտուտի ուսանողուհիներից մեկի հայցն ընդդեմ իր ինստիտուտի և կրթության նախարարության, ինչը, սակայն, մերժվեց: Իշխանությունների հավաստիացմանբ՝ գլխաշորը որևէ ձևով չի վտանգում կրոնը դավանելու ազատությունը, մինչդեռ հակասության մեջ է մտնում աշխարհիկ պետության սկզբունքների հետ:

Կրոնականացվածության մակարդակով որոշակիորեն աչքի է ընկնում Ֆերգանայի հովիտը: Մասնավորապես, Ֆերգանայի ուզբեկական՝ արևելյան հատվածում այսօր աշխարհիկ օրենքները, չնայած իշխանությունների ձեռնարկած ջանքերին, աստիճանաբար դուրս են մղվում՝ իրենց տեղը զիջելով շարիաթի օրենքներին: Այստեղ կանանց գերակշիռ մեծամասնությունն իսլամական տարազ է հագնում: Իսլամական արմատական կազմակերպությունները Ֆերգանայում օրըստօրե ավելանում են:

Արաքս Փաշայան
«Նորավանք» հիմնադրամ

ԻՐԱՆԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔ. ԿՐԹԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ[1]

Սփյուռքահայ համայնքներում ազգային ինքնության պահպանման, համայնական կյանքի կազմակերպման հարցերը քննարկելիս՝ կրթության ոլորտի հիմնախնդիրների հանդեպ, թերևս, արժե առանձնահատուկ հետևողականություն ցուցաբերել: Այս ոլորտի առաջնայնությունը բացատրվում է նրանով, որ կրթությունը (տվյալ դեպքում՝ ազգային) մի կողմից՝ հայապահպան գործառույթ է իրականացնում, մյուս կողմից՝ կրթության բարձր մակարդակի միջոցով է հնարավոր ապահովել տվյալ հասարակությունում համայնքի սոցիալական բարձր դիրքը, այլ խոսքերով՝ տեղում ունենալ ազգային ընտրանի:

Նախորդ հրապարակման[2] շրջանակներում շոշափել ենք ներկայիս իրանահայ իրականության հրատապ և մտահոգիչ երևույթներից մեկը՝ օր օրի թափ առնող արտագաղթը, որի հասցեականությունը մեծ մասամբ ոչ թե դեպի Հայաստան է, այլ առավելապես դեպի ԱՄՆ և եվրոպական երկրներ: Եվ եթե կրթական հարցերը դիտարկենք արտագաղթ կոչված երևույթից անկախ, անկասկած, թերի պատկերացումներ կստանանք խնդրի վերաբերյալ:

Ընդհանուր առմամբ, իրանահայ երիտասարդների շրջանում բարձրագույն կրթություն ստանալու և տեղում ինքնահաստատվելու ձգտումներն անընդհատ նկատելիորեն նվազում են: Պատճառները բազմաթիվ են և բազմաբնույթ: Խորքային պատճառները քննարկելու և պարզաբանելու ակնկալիքով «Հույս» երկշաբաթաթերթը դիմել է երիտասարդ ուսանողներին, համալսարանական կրթություն ստանալու նպատակով ընդունելության քննություններին մասնակցած աշակերտներին և ուսանողական խնդիրներին ծանոթ մասնագետներին հետևյալ հարցերով.

1. Ի՞նչ դժվարություններ են առկա Իրանում բարձրագույն ուսում ստանալու ճանապարհին:
2. Հայ ուսանողներն ի՞նչ խնդիրներ ունեն:

Այսօր իրանահայ երիտասարդները չեն ձգտում բարձրագույն կրթություն ստանալ Իրանում, քանի որ իրենց ապագան մտովի արդեն զատել են երկրի ապագայից: Սա առաջին և գլխավոր պատճառն է: Իհարկե, *«երբ ընտանիքում արտագաղթի մասին է խօսւում, եւ ընտանիքը պարզ չէ 6 ամիս յետոյ աշխարհի որ ծայրն է լինելու, այդ երեխան կամ երիտասարդը ինչպես ծրագրի իր ապագայ 6 տարւայ կեանքը»,*- նկատում է զրուցակիցներից մեկը:

Անշուշտ, **որևէ երկրից արտագաղթի և նույն երկրում սոցիալական բարձր դիրք ունենալու ակնկալիքների բացակայության միջև պատճառահետևանքային կապը երկկողմանի է:** Այս երկու խնդիրները միմյանց շաղկապված են, արտածվում են իրարից. երկրում որևէ լուրջ հեռանկարի բացակայությունը կարող է հանգեցնել արտագաղթի և հակառակը՝ արտագաղթի հզոր ալիքը կարող է ձևավորել բարձրագույն կրթություն ստանալու նկատմամբ համատարած անվստահություն և անտարբերություն:

Բայց և այնպես, կրթական ոլորտը չէր լինի այդքան նուրբ, բարդ և ընդգրկուն, եթե պատճառները չներառեին տարբեր մեծ ու փոքր խնդիրներ, որոնցից յուրաքանչյուրն իր բացասական ազդեցությունն է թողնում ստեղծված իրավիճակի վրա:

Այսպես. իրանահայ երիտասարդների հետ հարցազրույցներից պարզ է դառնում, որ խնդիրները բազմաթիվ են: Դրանք պայմանավորված են ինչպես համայնքի առանձնահատկություններով, այնպես էլ համայնքի մի շարք ներքին կանոնակարգումներով ու պետական օրենքներով, որոնք գործում են Իրանի կրթական համակարգում:

---

[1]Հոդվածը պատրաստվել է Թեհրանում հրատարակվող «Յոյս» երկշաբաթաթերթի 2007թ. համարներում զետեղված նյութերի և հրապարակումների հիման վրա:

[2] Տե՛ս *Թ.Վարդանյան,* Իրանահայ համայնք. ճամպրուկային տրամադրություններ, Գլոբուս #10, 2007:

Անշուշտ, բարձրագույն կրթություն ստանալու հեռանկարն ապահովում է միջնակարգ կրթությունը, որն աշակերտները ստանում են դպրոցում: Իրանում գործող հայկական ազգային դպրոցներն իրանական պետական դպրոցներից տարբերվում են միայն նրանով, որ շաբաթական 4 ժամ հատկացվում է հայերեն առարկաների դասավանդմանը: Սակայն հայկական դպրոցները չեն ապահովում մյուս առարկաներով համապատասխան պատրաստվածություն, ինչը հնարավորություն կտար շրջանավարտին մուտք գործել պետական կամ «ազատ» (ոչ պետական) համալսարաններ:

Կարևորագույն խնդիրը անհավասար պայմաններն են, որում հայտնվել են բարձրագույն կրթություն ստանալ ցանկացող մեր հայրենակիցներն Իրանում: Խնդիրն այն է, որ ապագա ուսանողները, բացի մասնագիտական առարկաներից (մաթեմատիկա, ֆիզիկա և այլն), պետք է քննություն հանձնեն նաև կրոնի մասով (բոլոր հարցաթերթիկների 3-րդ հարցը): Բայց մի շարք դպրոցներում հաշվի չեն առնվում ազգային և կրոնական փոքրամասնությունների գոյությունը, և հարցերը կազմվում են մահմեդական կրոնի վերաբերյալ: Իսկ բարձրագույն կրթական հաստատություններում կրոնական փոքրամասնությունների կրոնի վերաբերյալ հարցերն առանձին են, բայց ստացած նիշերը՝ տարբեր: Ներկայացնենք հատված համալսարանական միության նախկին վարչության անդամի հետ հարցազրույցից, որը կպարզաբանի առկա խնդիրը.

«*Քննութեան մէջ հարցերն ու քննական պայմանները պէտք է հաւասար լինեն: Փոքրամասնութիւնների կրօնի համար առանձին հարցեր են տալիս, բայց արդեօք այդ հարցերը նո՞յն հեշտութեամբ են, ինչ որ իրենց համար է: Չէ՛: Մեր աշակերտները մասնակցում են կոնկուրին (մրցույթին– Թ.Վ.) եւ մաթեմատիկան, ֆիզիկան ու այլ ընդհանուր առարկաներից միջին հաշուով 80 տոկոս նիշ ստանում են, բայց միանգամից կրօնի հարցերի 30 տոկոսն են ստանում, այն ինչ իրենք իրենց իսլամական կրօնի հարցերի 80-90 տոկոսն են ստանում: Նրանց համար կրօնի բաժինը իրենց ասածով «նամրէ բիար ա» (նիշ բերող) եւ օգնում է բարձրացնելու ընդհանուր նիշը, բայց մեզ համար հակառակն է, այն իջեցնում է: Այս խնդրի լուծումը շատ հեշտ է. կարող են մեր կրօնի նիշը բազմապատկելով որոշակի գործակիցի բարձրացնեն. ասենք եթէ միջինը պարսիկների համար 85 է, պէտք է հայերինն էլ բարձրացնեն, որ դառնայ 85, ոչ թէ 30»:*

Բացի այդ, հարցաթերթիկում հարցերը շարադրված են պարսկերենով, նաև, որպես կանոն, առկա են հարցեր արաբերենից: Կրոնական և ազգային փոքրամասնությունների դիմորդների համար սրանք նույնպես անհավասար պայմանները խորացնող իրողություններ են: Այսպես, ուսանողական խնդիրներին ծանոթ մասնագետը փաստում է մի շարք լրացուցիչ դժվարությունների առկայության մասին. «*Լեզուի հարցն էլ պակաս կարեւոր չէ: Մեր հայ երեխաները երբեմն հարցը չեն հասկանում, որովհետեւ իրենց մայրենի լեզուն չէ: Նուրբ եւ հոգեբանական հարցեր կան: Արաբերէն լեզուի հարցն էլ կայ, որը նրանց երկրորդ լեզուն է՝ կրօնի լեզուն, բայց մեզ համար 4-րդ ու 5-րդ լեզուն է եւ կրօնի լեզուն չէ, դրա համար էլ գնահատականը իջնում է»:*

Համայնքներում ազգային ընտրանու ձևավորմանը խոչընդոտող՝ վերը նշված պատճառներից զատ նկատելի են նաև որոշ օբյեկտիվ երևույթներ, որոնք բնորոշ են գրեթե բոլոր համայնական կյանքով ապրող հանրույթներին: Օրինակ՝ այն, որ **համայնքներում ինքնակազմակերպման մեխանիզմները և անցկացվող միջոցառումներն առավելապես մշակութային ուղղվածության են, բայց հազվադեպ՝ գիտական**[1]: Որպես կանոն, գիտական ուղին ընտրած անհատն իր ապագան կերտում է ոչ թե համայնական կառույցներում ներգրավվելու ճանապարհով, այլ կտրվելով համայնքից և ինտեգրվելով հանրության մեջ: Պատճառն այն է, որ, օրինակ, իրանական համայնքում, մեր ունեցած տեղեկությունների համաձայն, բացակայում են էթնիկ սկզբունքով ստեղծված գիտական ակումբներ, գիտական կենտրոններ, միավորված գիտնականների խմբեր և այլն: Արդյունքում՝ ինքնուրույն (առանց համայնական կառույցների օգնու-

[1] Նման ուշագրավ դիտարկումներ հնչեցին նաև «Երկրամաս» թերթի խմբագիր Տ.Թավադյանի զեկույցում («Նորավանք» ԳԿՀ-ի կողմից սույն թվականի հունիսի 19-20-ին Երևանում անցկացված «Հայկական համայնքներն արդի փուլում. գոյապահպանում, հեռանկարներ» կոնֆերանսի ընթացքում): Զեկույցն ամբողջությամբ նվիրված էր Կրասնոդարի երկրամասի հայկական ազգային օջախներին:

թյան) կամ համայնքի շրջանակներում որոշակի բարձր սոցիալական դիրքի հասած հայ անհատները, ինտեգրվելով ընդհանուր հասարակությանը, կտրվում են համայնքից, խուսափում հայկական միջավայրի հետ սերտ հարաբերություններից, և անձնական ինքնանույնացման ազգային սկզբունքը սկսում է զիջել դիրքերը քաղաքացիական ինքնությանը:

Գիտությունը ոլորտ է, որը երկարաժամկետ ֆինանսական ներդրումներ է պահանջում, իսկ համայնական ծրագրերում ֆինանսական ներդրումներ իրականացնող անհատ ձեռներեցները կամ կառույցները հաճախ խուսափում են երկարաժամկետ ներդրումային ծրագրերից՝ գերադասելով մեկանգամյա, բայց հնչեղություն ստացող և արագ իրականացվող ծրագրեր:

Այսպիսով, եթե կրթական խնդիրները թողնվեն համայնքների ներսում առկա ներուժի՝ առանձին անհատների կամքի, անձնվեր աշխատանքի հույսին և իրականացվեն միայն ինքնակազմակերպման ավանդական մեխանիզմներով, ապա մենք շարունակաբար կարձանագրենք հայկական համայնքներում մեր հայրենակիցների կրթական մակարդակի անկում, ազգային ընտրանու կամ դիրքերի թուլացում կամ իսպառ բացակայություն կամ, ի վերջո, «ապազգայնացում»:

Թամարա Վարդանյան
«Նորավանք» հիմնադրամ

ՀՈՒՆԳԱՐԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔ. ԱՆՑՅԱԼԸ ԵՎ ՆԵՐԿԱՆ

Հունգարացի հայագետ Բենեդեկ Ժիգմոնդն արդեն 10 տարի զբաղվում է հայոց լեզվի, հայկական մշակույթի, բանահյուսության հարցերով: Նրա հետաքրքրության ոլորտում է գտնվում նաև հունգարահայ համայնքը՝ իր բազմաշերտ խնդիրներով: Բենեդեկը հայագիտություն է ուսումնասիրել Հունգարիայի պետական համալսարանում՝ հայտնի հայագետ, պրոֆեսոր Էդմոնդ Շյուցի մոտ: Նա գլխավորում է իր իսկ հիմնած «Գիտակազմակերպչական ինստիտուտը», որն այլ խնդիրների շարքում զբաղվում է նաև հայագիտությամբ, ինչպես նաև հրատարակում է գրքեր և կազմակերպում դասընթացներ: Ինչպես տեղեկացանք հունգարացի հայագետից, որն, ի դեպ, լավ տիրապետում է ոչ միայն արդի արևելահայերենին, այլև գրաբարին ու արևմտահայերենին, Հունգարիայի որևէ համալսարանում չկա հայագիտության ամբիոն, և երիտասարդ գիտնականի կարևոր նպատակներից է առաջիկայում հիմնել նման կենտրոն: Վերջերս Բենեդեկ Ժիգմոնդը հերթական անգամ այցելել էր Հայաստան, և մեր խնդրանքով զրուցեցինք հիմնականում հունգարահայ համայնքի մասին:

Ե՞րբ են հայերն առաջին անգամ եկել Հունգարիա:

Հայերի գաղթը Հունգարիա կարելի է բաժանել 4-5 փուլի: Առաջինը եղել է մոտավորապես 10-րդ դարում: Մեր ժամանակագիրները նշում են, որ հայերը հենց հունգարացիների հետ են եկել ներկայիս Հունգարիայի տարածք: Հայտնի է, որ հունգարացիները 9-րդ դարի վերջին և 10-րդի սկզբին Սև ծովի հյուսիսային ափերից եկել են Հունգարիա: Կան ուրիշ փաստեր, ապացույցներ ևս Հունգարիայում հայերի բավական վաղ հաստատվելու մասին: Կուզենայի հատկապես նշել հետևյալը. մենք ունենք եկեղեցիներ, որոնք պետք է որ անպայման հայ ճարտարապետների ձեռքով կառուցված լինեն, որովհետև դրանք նման են Անի քաղաքի եկեղեցիներին և ունեն նույն ձևը: Ավելին, այդպիսի եկեղեցիներ աշխարհի ոչ մի այլ վայրում չեն հանդիպում: Բացի այդ, պահպանվել են փաստաթղթեր, որոնք վերաբերում են հունգարացի իշխանների, թագավորների կողմից հայերին հողեր, տարածքներ տրամադրելուն: Օրինակ՝ նախկին մայրաքաղաք Էստերգոմում 1240-ական թվականներին կար հայկական թաղամաս: Այս ամենը փաստում է, որ հայերի ներկայությունը շատ հին է: Մենք ունենք նաև շատ բնակավայրեր, որոնց անվանումն արդեն ցույց է տալիս, որ այդտեղ հայեր են եղել: Հարկ է նշել, որ առաջին գաղթի ժամանակ եկած հայերից ոչ ոք այսօր որպես հայ չի պահպանվել: Նրանք ձուլվել են հունգարացիներին: Սակայն, օրինակ, կան մարդիկ, ովքեր հայտարարում են, թե այդ ժամանակ եկած հայերի սերունդներից են, բայց ես, ճիշտն ասած, չեմ կարող ասել, թե որքանով է դա արժանահավատ: Հայերի երկրորդ գաղթը տեղի է ունեցել 17-րդ դարի ընթացքում և տևել է մոտավորապես մինչև 18-րդ դարի սկիզբը: Հայտնի է, որ 1672թ. Տրանսիլվանիայի իշխանը պաշտոնական թույլտվություն է տվել հայերի 3000 ընտանիքների, այսինքն՝ մոտ 10.000, հոգու բնակվել Տրանսիլվանիայում, հողեր ունենալ, առևտրական գործունեություն ծավալել: Այս հայերը եղել են անեցիների ժառանգներ, որոնք 1235թ. հեռանալով Անիից՝ հաստատվել են Ղրիմում, այնտեղ ձևավորել և զարգացրել բարձր մակարդակի մշակույթ, ձեռագրերի դպրոց և այլն: Այնուհետև նրանց մի խումբ տեղափոխվել է Նոր Նախիջևան, մեկ այլ խումբ՝ Պոդոլիա և Լեհաստանի հարավ, իսկ մյուս մասը՝ Պոդոլիայից Մոլդովա և այնտեղից էլ Տրանսիլվանիա: Եվ, օրինակ, Տրանսիլվանիայի հայերի լեզուն շատ մոտ է Նոր Նախիջևանի հայերի լեզվին:

Իսկ Տրանսիլվանիայի հայերը ձուլվե՞լ են, թե՞ պահպանել են իրենց ազգային նկարագիրը:

Նրանք մինչև 19-րդ դարը պահպանում էին իրենց լեզուն՝ տրանսիլվանահայերենը, ավելին, ստեղծել են նաև գրական լեզու: 19-րդ դարում հատկապես Եվրոպայի զանազան վայրերում, որտեղ հայեր կային, մտավորականների կենտրոններում ստեղծվել էին գրական

լեզուներ, որովհետև գրաբարն արդեն ոչ ոք կամ համարյա ոչ ոք չէր հասկանում: Արևելյան Հայաստանում ձևավորվել էր արևելահայ գրական լեզուն, Արևմտյան Հայաստանում և Ստամբուլում՝ արևմտահայերենը, իսկ Տրանսիլվանիայում՝ տրանսիլվանահայերեն գրական լեզուն: Սակայն տարբեր կենտրոններում ստեղծված գրական լեզուները մեռան՝ իրենց տեղը զիջելով արևելահայերենին և արևմտահայերենին: Նույնը տեղի է ունեցել և տրանսիլվանահայերենի հետ, ու արդեն 19-րդ դարում այն դադարում է գրական լեզու լինելուց և օգտագործվելուց: Ավելին, այն կորցնում է նաև խոսակցական լեզվի իր դերը: Սակայն տրանսիլվանահայերը մինչև այսօր պահպանում են իրենց հայկական ինքնությունը, մշակույթը, կրոնը և հայ կաթոլիկ եկեղեցին: Կարելի է ասել՝ նրանք չեն ձուլվել: Սուրբ պատարագի լեզուն մինչև օրս մնում է հին հայերենը, բացի այդ, նրանք ունեն հատուկ՝ ֆոլկլորային-եկեղեցական երգեր տրանսիլվանահայերենով: Մինչև օրս էլ կան մարդիկ, ովքեր կարող են երգել այդ երգերը: Ճիշտ է, իրենք արդեն չեն հասկանում, որովհետև լեզուն մոռացել են, բայց երգերը գիտեն, ինչպես նաև գիտեն, թե երբ պետք է դրանք երգել, ինչ ծիսակատարության, ինչ տոնի ժամանակ:

Բացի երգերից՝ ինչ-որ տեքստեր պահպանվե՞լ են այս լեզվով, արդյո՞ք այն ուսումնասիրված է:

Այո, ես ունեմ տեքստեր և ձայնագրել եմ երգեր այս լեզվով ու հիմա գրում եմ մի աշխատանք՝ նվիրված տրանսիլվանահայերենի քերականությանն ու բառապաշարին: Նշեմ նաև, որ Հր.Աճառյանը, Գ.Ջահուկյանը և այլ մեծ լեզվաբաններ իրենց բարբառագիտական գրքերում անդրադարձել են տրանսիլվանահայերենին, սակայն նրանք խոսում են միայն բարբառի, այլ ոչ թե գրական լեզվի մասին: Տրանսիլվանահայերենն արևմտահայերենի ճյուղ է, լեզվի կառուցվածքը և քերականությունը շատ նման են. օրինակ՝ արևելահայերեն ասում են *սիրում եմ,* արևմտահայերեն՝ *կսիրեմ,* իսկ տրանսիլվանահայերենում ասում են *գիսիրիմ:*

Իսկ ե՞րբ է եղել հայերի գաղթի երրորդ փուլը:

Երրորդ խումբը 1915թ. ցեղասպանությունից փրկված և Հունգարիայում ապաստանած հայերն են: Նրանք այստեղ հիմնել են «Մասիս» ընկերությունը, որն էլ հրատարակել է մի ամսաթերթ՝ «Նոր դար»: Հայերի այս խումբը մնացել է Հունգարիայում մինչև Երկրորդ համաշխարհային պատերազմի վերջը և կոմունիստական վարչակարգի հաստատումը, որից հետո նրանց մեծ մասը հեռացել է Հունգարիայից՝ չհարմարվելով վարչակարգին: Չորրորդ խումբը այն հայերն են, որոնք Խորհրդային Միության տարիներին եկել են Հունգարիա աշխատելու ու մնացել են: Հինգերորդ խումբը Խորհրդային Միության փլուզումից հետո, Ղարաբաղյան պատերազմի ժամանակ եկած հայաստանցի հայերն են: Նրանց հոսքը շարունակվում է մինչև այսօր՝ պայմանավորված Հայաստանի տնտեսական վիճակով:

Ինչպիսի՞ն է հունգարահայերի հայերենի իմացության մակարդակը, նոր սերունդը սովորո՞ւմ է հայերեն, արդյոք կա՞ն դպրոցներ, թեկուզ կիրակնօրյա:

Ցավոք, մինչև օրս հայկական դպրոց չկա, և մենք աշխատում ենք դպրոց հիմնել: Հայ Առաքելական եկեղեցին Հունգարիայում ներկայացուցիչ է ունեցել միայն 2003թ., և այդ հոգևոր հովիվը ստեղծել էր կիրակնօրյա դպրոց, որը, ցավոք, հիմա չի գործում: Այդ հոգևորականը միևնույն ժամանակ Չեխիայի Հայ Առաքելական եկեղեցու սպասավորն էր: Կարճ ժամանակ անց, նաև տնտեսական պայմաններից ելնելով, նա տեղափոխվեց Չեխիա: Հունգարիայում եկեղեցուն ֆինանսապես աջակցող մարդիկ հայտարարեցին, որ այլևս ի վիճակի չեն օգնել, և ներկայումս Հունգարիայի հայերը, որոնք առաքելական եկեղեցու հետևորդներ են, չունեն հոգևոր հովիվ: Բայց, օրինակ, տեղական ինքնակառավարման մարմինները կազմակերպում են հայերենի դասընթացներ, որոնց, սակայն, մասնակցում են սահմանափակ թվով հայ երեխաներ, հիմնականում՝ տրանսիլվանահայեր: Իսկ Հայաստանից նոր եկածների զավակներն իրենց ծնողներից են սովորում հայերեն, և վերջիններս ձգտում են, որ իրենց զավակները լավ խոսեն հայերեն: Ցավոք, այդ հայերը ևս ավելի լավ խոսում են հունգարերեն, ու դա հասկանալի է, քանի որ նրանք հաճախում են հունգարական մանկապարտեզ, դպրոց, առո-

րյայում, կենցաղում օգտագործում են առավելապես հունգարերենը: Հայաստանցի հայերը պաշտպանում են կապը Հայաստանի իրենց ազգականների հետ, շփվում, օգնում են նրանց, այցելում Հայաստան և բառապաշարի փոփոխությունները, որ տեղի են ունեցել հայերենում վերջին 15 տարիներին, ինչ-որ չափով յուրացնում են, բայց դա, իհարկե, բավարար չէ:

Եկեղեցիների մասին ի՞նչ կասեք. փաստորեն, կա Հայ Առաքելական եկեղեցու ներկայացուցչություն, որի հոգևոր սպասավորն ապրում է Չեխիայում:

Հայտնի է, որ Հունգարիա գաղթած հայերը (2-րդ խումբը) 17-րդ դարի վերջին կաթոլիկություն ընդունեցին, նրանք արդեն կառուցել են եկեղեցիներ արևմտյան ոճով, սակայն ոչ մի լուրջ փոփոխություն չի եղել, միայն իրավական ենթակայությունը կաթոլիկ եկեղեցունն է: Բացի այդ, կաթոլիկ հայերը Մխիթարյան միաբանության հայրերի միջոցով միշտ կարողացել են քահանա ունենալ, որը շատ կարևոր հանգամանք է: Հայ կաթոլիկ եկեղեցին մեծ դեր է կատարել հայկական ինքնության պահպանման համար: Տրանսիլվանիայում կան 4 հայկական եկեղեցիներ, որոնք ունեն բավական հարուստ գրադարաններ, և հայ գրականության ու մշակույթի վերաբերյալ գրքերի տարածման գործում մեծ դեր են կատարել: Այդ եկեղեցիների շուրջ ստեղծվել են որոշ դպրոցներ, երգչախմբեր: 1920թ. Տրանսիլվանիայի հայերի մի մասը տեղափոխվել է արդի փոքր Հունգարիայի տարածք, այսինքն՝ Բուդապեշտ և այլ քաղաքներ: Բուդապեշտում կառուցվել է հայ կաթոլիկ եկեղեցի, որը մինչև այսօր ծառայում է որպես հայերի հանդիպատեղի ոչ միայն կիրակնօրյա պատարագներին, այլև այլ օրերի, օրինակ՝ ցեղասպանության հիշատակի օրը: Համայնքի միավորման գործում, կարող ենք ասել, մինչև այսօր մեծ է հայ կաթոլիկ եկեղեցու դերը:

Իսկ կաթոլիկ եկեղեցու հետևորդ հայե՞րն են մեծ թիվ կազմում, թե՞ առաքելական:

Միանշանակ՝ կաթոլիկ:

Ինչպե՞ս են կաթոլիկ և առաքելական հայերի փոխհարաբերությունները:

Շատ լավ, և ասեմ, որ, օրինակ, երբ առաքելական եկեղեցին դեռ չկար, առաքելական հայերն այցելում էին հայ կաթոլիկների եկեղեցի:

Իսկ ինչպիսի՞ն են Հունգարիայի հայերի բոլոր խմբերի՝ տրանսիլվանահայերի, հայաստանցի հայերի և մյուսների հարաբերությունները:

Սփյուռքահայերի շրջանում կան, այսպես կոչված, դասական գործոններ՝ եկեղեցին, լեզուն, հին հայրենիքը և այլն: Հիմք ընդունելով այս բաժանումները, իհարկե, հունգարահայերի մեջ խմբավորումներ կան: Բայց Հունգարիայի հայերի խմբավորման և հարաբերությունների համար ուրիշ գործոններ կան, որոնք շատ ավելի հզոր են: Եվ դրանք հաստատ լեզվի կամ եկեղեցական պատկանելության գործոնները չեն, այլ այն, թե ով ում հետ կապված ինչ շահեր ունի: Կան որոշակի կազմակերպություններ, որոնք կոչվում են մշակութային ընկերություններ, բայց իրականում գործում են որպես կուսակցություններ: Հունգարիայում փոքրամասնությունները կարող են ընտրել իրենց ինքակառավարման մարմինները, և այդ ընտրությունների ժամանակ էլ հենց բախվում են շահերը: Ահա սա է որոշիչ գործոնը, այսինքն՝ թե տվյալ հայը որ կուսակցությանն է համակրում:

Ձեր նշած կուսակցություններն ինչ-որ գաղափարախոսություն ունե՞ն, թե՞ ոչ:

Ոչ մի գաղափարախոսություն չկա, որին նրանք հետևում են:

Հունգարահայ համայնքն արդյո՞ք ունի ներփակ բնույթ, կա՞, օրինակ, ներքին ամուսնությունների ավանդույթ, որը կօգնի էթնիկ նկարագրի պահպանմանը: Այսինքն՝ կա՞ չձուլվելու ձգտում:

Մինչև 20-րդ դարի սկիզբը հայերը գերազանցապես իրար հետ էին ամուսնանում: Սակայն 1920թ. հետո, երբ տրանսիլվանահայերի մի մասը տեղափոխվեց Բուդապեշտ, հայերի ներքին ամուսնությունների ավանդույթը փոփոխության ենթարկվեց: Բուդապեշտը 2 միլիոնա-

նոց քաղաք է, և առանձին հայկական թաղամաս չկա, իսկ Տրանսիլվանիայում հայերն ունեին իրենց քաղաքները, գյուղերը, թաղամասերը, ինչը բավական կարևոր էր: Հայերն ամփոփ չէին ապրում Բուդապեշտում, և սա, բնականաբար, նվազեցնում էր հանդիպումների, շփումների թիվը: Կարելի է ասել, որ այն ժամանակվանից սկսած, երբ տրանսիլվանահայերը տեղափոխվեցին Հունգարիա, խախտվեց ներքին ամուսնությունների ավանդույթը, սկսվեցին խառնամուսնություններ, ձուլում, և հիմա հազվադեպ է պատահում, որ հայն ամուսնանա հայի հետ: Իսկ նոր եկածների մեջ կան մարդիկ, ովքեր եկել են Հունգարիա հենց ամուսնության պատճառով, այսինքն՝ ամուսնացել են հունգարացու հետ ու եկել: Միայն զուտ հայկական ընտանիքներ կան այն հայաստանցիների շրջանում, ովքեր ընտանիքներով են եկել Հունգարիա:

Կարո՞ղ ենք ասել, որ Հունգարիայում միասնական հայ համայնք, որպես այդպիսին, չկա:

Մինչև վերջին տարիները հունգարահայերը բոլորը միասին են հիշել Հայոց ցեղասպանության օրը, սակայն այս տարի առաջին անգամ է, որ նրանք առանձին նշեցին: Ուրեմն, եթե տրանսիլվանահայերը, հայաստանցի հայերը, լիբանանահայերը, իրաքահայերը բոլորը միասին են հիշում ցեղասպանությունը, ես կարծում եմ, որ կարելի է ասել՝ հայ համայնք կա:

Իսկ ինչո՞ւ այս տարի ցեղասպանության օրը միասին չեն նշել, արդյո՞ք դա ուներ տեխնիկական պատճառ:

Ոչ, դա ուներ զուտ քաղաքական, կուսակցական պատճառ:

Որպես հայագետ՝ ինչպե՞ս եք տեսնում հայ համայնքի ապագան, եթե կյանքի ներփակ բնույթը չի պահպանվում, լեզուն գրեթե չի պահպանվել, ներքին ամուսնություններ համարյա չկան, խառնածին հայերը որքա՞ն կարող են պահել իրենց ազգային ինքնագիտակցությունը: Օրինակ՝ հունգարացի մոր և հայ հոր երեխան որքանո՞վ կմնա հայ, այսինքն՝ ո՞ր ազգի գիտակցությունն ավելի գերակա կլինի՝ հայկակա՞ն, թե՞ հունգարական, եթե նաև հաշվի առնենք, որ նրանք ապրում են հունգարական միջավայրում:

Կարծում եմ՝ հայկական ինքնագիտակցությունը շատ մեծ ուժ է: Ես Հունգարիայում մարդկանց եմ ճանաչում, որոնց միայն մի տատիկն է հայ, բայց իրենք ասում են, թե իրենք հայ են:

Արդյոք մե՞ծ թիվ են կազմում նման մարդիկ:

Շատերը կան, նրանց թիվը հասնում է մի քանի հազարի: Կարծում եմ, որ, օրինակ, Հայաստանից եկածների երեխաների մեծ մասը կամուսնանա հունգարացիների հետ, բայց նրանց զավակները հայեր կլինեն: Ես վստահ եմ, որ այդպես կլինի:

Ինչո՞վ է պայմանավորված ձեր վստահությունը և այդօրինակ լավատեսությունը:

Ես տեսնում եմ, որ, օրինակ, տրանսիլվանահայերը, որոնք 800 տարի առաջ են հեռացել Հայաստանից, մինչև օրս պահպանում են իրենց հայությունը, հայ գենն ուժեղ է: Ուզում եմ հատկապես շեշտել, որ մենք անպայման ձգտում ենք ստեղծել հայկական դպրոց, որովհետև եթե այն չկա, շատ դժվար է պահպանել լեզուն, մշակույթը: Տրանսիլվանիայի բոլոր մեծ քաղաքներում եղել են հայկական դպրոցներ, եկեղեցիներ: Պետք է սատարել Հայ Առաքելական եկեղեցուն, որը դժվարին վիճակում է, կազմակերպել դասընթացներ, հայագիտական ամբիոն ստեղծել և գործադրել այն բոլոր միջոցները, որոնք կնպաստեն հայ ինքնության պահպանմանը:

Հունգարիայի հայության թվաքանակի մասին կարո՞ղ եք ինչ-որ բան ասել:

Դժվար է հստակ պատասխանել, որովհետև ոչ մի փաստ չկա որևէ արժանահավատ եզրակացության համար, բայց կարող ենք ասել, որ մոտավորապես 15.000 մարդ հայկական ծագում ունեն: Վստահաբար կարելի է ասել, որ 1000 տրանսիլվանահայ կա, որոնք միշտ գալիս են համայնքային, եկեղեցական միջոցառումների, ևս 200-300 մարդ էլ Հայաստանից կամ Խորհրդային Միության նախկին հանրապետություններից:

Ինչպե՞ս են հունգարահայերն ընկալում Հայաստան-հայրենիքը:

Այստեղ պետք է տարբերակում անել՝ տրանսիլվանահայերը, որոնք 800 տարի առաջ են եկել Հայաստանից, այն կոչում են նախահայրենիք, իսկ նոր եկածները՝ հայրենիք: Մյուսները, օրինակ՝ լիբանանահայերը, իրաքահայերը և այլն, բոլորովին այլ կերպ են վերաբերվում Հայաստանին, որովհետև նրանք սփյուռքահայ են և փաստորեն մի սփյուռքից եկել են մեկ այլ սփյուռք: Ուրեմն, պետք է տարբերակել երեք տեսակ վերաբերմունք և հարաբերություն: Հայաստանից եկածները հաճախ են գալիս Հայաստան, և քանի որ հարազատներ ունեն, նրանց կապերը շատ սերտ են հայրենիքի հետ, իսկ տրանսիլվանահայերի համար դա շատ դժվար է. 800 տարի հետո անհնար է հարազատ գտնել Հայաստանում, իրենք պարզապես հարազատ չունեն այնտեղ: Ասեմ նաև, որ Հունգարիայում բնակվող հայաստանցի հայ քաղաքական գործիչները խոչընդոտում են տրանսիլվանահայերին նախահայրենիքի հետ կապեր ստեղծել:

Ինչո՞ւ:

Դա քաղաքական մրցակցություն է, կուսակցական: Սկզբում տրանսիլվանահայերը փորձել են հայաստանցի հայերի միջոցով կապ հաստատել Հայաստանի հետ, բայց դա անհնար դարձավ քաղաքական պատճառներով: Իսկ երկու տարի առաջ՝ 2005թ., նրանք այցելել են Հայաստան մի խմբով և արդեն սկել են նոր կապեր ստեղծել Հայաստանի հետ:

Ո՞րն է Հունգարիայում հայերի հիմնական զբաղմունքը, կա՞ն ոլորտներ, որտեղ ավելի շատ հայերն են ներկայացված:

Տրանսիլվանահայերը զբաղվել են ավանդական հայկական զբաղմունքներով, այսինքն՝ առևտրականներ էին, բժիշկներ, փաստաբաններ: Հունգարիայի խորհրդարանում 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին եղել է 15 հայ պատգամավոր: Հայերը շատ մեծ դեր են խաղացել Հունգարիայի քաղաքական կյանքում և հունգարական հեղափոխության մեջ, ինչպես նաև ազատագրական պայքարում (19-րդ դարի առաջին կես): Հայերը զգալի թիվ են կազմել նաև սպայական անձնակազմում և զինվորական ղեկավարության մեջ: Նշեմ նաև, որ նահատակ հերոսների մեջ նույնպես հայեր կան: Իսկ ներկայումս հունգարահայերը առևտրով են զբաղվում, կան բժիշկներ, երաժիշտներ, դժվար է ասել, թե ինչով են զբաղվում, սակայն շեշտեմ, որ, օրինակ, ամեն երգչախմբի մեջ առնվազն երկու տրանսիլվանահայ կա, և սա, կարելի է ասել, օրինաչափություն է: Իմ կարծիքով՝ ամենակարևորն այն է, որ Հունգարիայի հայերի գերակշիռ մասը մտավորականներ են:

Հունգարիայի կառավարությունը կամ պետական որևէ օղակ ճնշումներ գործադրո՞ւմ է ազգային փոքրամասնությունների, այդ թվում և հայերի վրա՝ լեզվի, եկեղեցու, մի խոսքով՝ ազգայինը մոռացնելու և ընդհանուր հունգարական ինքնություն ձեռք բերելու առումով:

Կարծում եմ՝ ճիշտ հակառակն է: Օրինակ՝ Հունգարիայում ստեղծվել են փոքրամասնական ինքնավարություններ, որոնք շատ քիչ երկրներում կան: Պետությունը գումարներ է տալիս փոքրամասնական ինքնավարություններին, որպեսզի զարգացնեն իրենց մշակույթը, պահեն ինքնությունը, ոչ թե ուծացվեն: Մենք շատ լավ գիտենք, որ փոքրամասնությունները հարստացնում են մեզ, մեր արժեքներից են: Մեր առաջին թագավորը՝ սուրբ Ստեփանոսը, որդուն ուղղված կտակում գրել է. «Դու միշտ սիրիր Հունգարիայի փոքրամասնություններին, որովհետև նրանք արժեք են և օգտակար են Հունգարիայի համար»:

Զրուցեց
Ռուբեն Մելքոնյանը

ՀՐԵԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԻՑ.
ԱԼԻՅԱ. 2

1948թ. մայիսի 14-ին հռչակվեց Իսրայել պետությունը: Հռչակագրում, մասնավորապես, նշվում էր, որ «Իսրայել պետությունը բաց է լինելու հրեական ներգաղթի և բոլոր փախստականների ի մի բերման համար»: Սրան հետևեց 1950թ. ընդունված «Վերադարձի մասին օրենքը», որն ամեն հրեա անհատի ավտոմատ իրավունք էր վերապահում ներգաղթել Իսրայել և դառնալ պետության լիիրավ քաղաքացի: Հաջորդող զանգվածային ներգաղթի ժամանակ շուրջ 690 հազ. հրեաներ ժամանեցին Իսրայել: Արդյունքում՝ 1951թ. ներգաղթողների քանակը ավելի քան կրկնապատկեց երկրի 1948թ. առկա հրեա բնակչության թվաքանակը: Ներգաղթողները հիմնականում Հոլոքոստը վերապրողներն էին, որոնք տեղավորված էին Գերմանիայում, Ավստրիայում և Իտալիայում ստեղծված հատուկ ճամբարներում, Բուլղարիայի և Լեհաստանի հրեական համայնքի մեծամասնությունը, Ռումինիայի հրեաների մեկ երրորդը, Լիբիայի, Եմենի և Իրաքի գրեթե ողջ հրեական համայնքը:

Լրացուցիչ ներգաղթ տեղի ունեցավ 1950-ական թթ. վերջերին - 1960-ական թթ. սկզբներին: Աֆրիկյան մի շարք երկրներում՝ Մարոկո, Ալժիր, Թունիս, անկախություն ձեռք բերելուց հետո ուժեղացան հակահրեական տրամադրությունները, ինչի հետևանքով 1952-1964թթ. ընթացքում շուրջ 240 հազ. հրեաներ Հյուսիսային Աֆրիկայից ներգաղթեցին Իսրայել: Այդ տարիներին մեծ քանակությամբ հրեաներ ներգաղթեցին նաև Լեհաստանից, Հունգարիայից և Եգիպտոսից:

1949թ. մայիսին, երբ Եմենի իմամը թույլատրեց երկրի 46 հազ. հրեաներից 45 հազարին լքել երկիրը, իսրայելական տրանսպորտային օդանավերը իրականացրին «Կախարդական [թռչող] գորգ» գործողությունը, որի արդյունքում (1949-50թթ.) եմենցի հրեաների համայնքը գրեթե ամբողջությամբ ներգաղթեց Իսրայել: Նրանց մեծագույն մասը մինչ այդ անգամ օդանավ չէր տեսել, սակայն նրանք հավատում էին աստվածաշնչյան մարգարեությանը, որ Աստված խոստացել էր վերադարձնել Իսրայելի զավակներին Սիոն «թևերի վրա»:

Մեծ քանակությամբ հրեա ներգաղթողներ եկան Արաբական և Միջին Արևելքի երկրներից: Շատ դեպքերում իրենց բնակության վայրերում նրանք ենթարկվում էին ճնշումների և պարզապես ստիպված էին լքել այդ երկրները: Այսպես, 1951թ. շուրջ 114 հազ. (այլ աղբյուրներում՝ 121 հազ.) հրեաներ «Էզրա» և «Նեհեմիա» գործողությունների արդյունքում տեղափոխվեցին Իսրայել միայն Իրաքից: Նույն թվականին 32 հազ. հրեաներ ներգաղթեցին Լիբիայից:

Ներգաղթողները հսկայական դժվարություններ էին կրում: Նոր էր ավարտվել անկախության համար մղվող պատերազմը, նորաստեղծ պետության տնտեսությունը ողբալի վիճակում էր, առկա էին հարյուր հազարավոր ներգաղթողներին բնակարանով ու աշխատանքով ապահովելու բազմաթիվ բարդություններ: Սակայն աստիճանաբար ամեն ինչ հաղթահարվում էր. եթե սկզբում ներգաղթողներին Իսրայելը դիմավորում էր «վրանային քաղաքներով» (պատրաստված էին ավելի քան 120 նման ճամբարներ), ապա ժամանակ անց դրանք փոխարինվեցին մշտական բնակավայրերով և բնակելի տներով: Ստեղծվում էին աշխատանքի հնարավորություններ, մարդկանց սովորեցնում էին եբրայերեն, կրթական ծրագրերն ընդլայնվում և հարմարեցվում էին տարաբնույթ պահանջմունքներ ունեցող երեխաների կարիքներին: 1950-ական թթ. կեսերին բոլոր նորեկներն ապահովված էին մշտական (ոչ ժամանակավոր) բնակելի տարածքներով: 1960-ական թթ. կեսերին Իսրայելն արդեն կառուցել էր շուրջ 450 բնակավայրեր և 25 նոր քաղաքներ:

1985թ. օգոստոսին իրականացվեց «Մովսես» գործողությունը, երբ նոյեմբերից մինչև հաջորդ տարվա հունվար ընկած հատվածում, ընդամենը վեց շաբաթվա ընթացքում, 6500-8000 եթովպական հրեաներ, որ մինչ այդ ոտքով հարյուրավոր կիլոմետրեր էին կտրել-հասել Սուդան, տեղափոխվեցին Իսրայել: 1991թ. մայիսին եթովպական ծագմամբ հրեաներին (ֆալաշ-

ներ) փրկելու նպատակով իրականացվեց «Սողոմոն» գործողությունը։ Ընդամենը երեսուն ժամվա մեջ, 41 օդանավային թռիչքների իրականացման շնորհիվ, 14325 հրեաներ Ադիս Աբեբայից տեղափոխվեցին Իսրայել։ Այդ ժամանակներից սկսած՝ եթովպական հրեաները շարունակում են ներգաղթել Իսրայել՝ հասցնելով եթովպական ծագմամբ հրեաների թիվը մինչև 100 հազարի (Եթովպիայում, տարբեր հաշվումներով, դեռևս կան 22-50 հազ. հրեաներ)։

Շուրջ 30 հազ. իրանյան հրեաներ ներգաղթեցին Իսրայել իսլամական հեղափոխությունից հետո, չնայած այն հանգամանքին, որ նրանց մեծագույն մասն, այնուամենայնիվ, գերադասեց բնակություն հաստատել ԱՄՆ-ում։

Զանգվածային արտագաղթը ցանկալի չէր խորհրդային վարչակարգի համար։ «Երկաթե վարագույրից» դուրս գալու գրեթե միակ ընդունելի միջոցն ընտանիքների միավորման թեզն էր և այդ նպատակով ազգականների ուղարկած հրավերի առկայությունը։ Հաճախ, սակայն, դա էլ չէր օգնում։ Նման իրավիճակի թելադրանքով էր, որ 1950-ական թթ. սկզբներին Իսրայելում ստեղծվեց հատուկ խումբ, որը զբաղվում էր ԽՍՀՄ-ից հրեական ընտանիքների արտագաղթելուն օժանդակելու հարցով։

1960-1970թթ. ընթացքում ԽՍՀՄ իշխանությունները թույլ տվեցին արտագաղթել միայն 4000 հրեաների։ Արտաքին տարաբնույթ ճնշումներին տեղիք տալով, նաև ժողովրդավարական վերափոխումների արդյունքում, ԽՍՀՄ-ից արտագաղթի քվոտան մեծացվեց, և 1980-ական թթ. երկիրը լքեցին շուրջ 250 հազ. հրեաներ։ Սակայն նրանցից շատերը, ում թույլատրված էր գնալ Իսրայել, ընտրեցին այլ երկիր՝ գերազանցապես ԱՄՆ, գնալու հնարավորությունը։ Այնուամենայնիվ, շուրջ 140 հազ. հրեաներ արտագաղթեցին Իսրայել։ 1989թ. ԽՍՀՄ-ից դուրս գալ թույլատրվեց 71 հազ. հրեայի, որոնցից միայն 12 հազարն արտագաղթեց Իսրայել։ 1990թ. Իսրայել արտագաղթեցին շուրջ 190 հազ. հրեաներ, 1991թ.՝ 150 հազ.։ Իրավիճակի կայունացումը բերեց արտագաղթի ծավալների նվազեցմանը, և հրեաների տարեկան արտահոսքը նախկին ԽՍՀՄ տարածքից իջավ մինչև 70 հազ. մարդու։ Ընդհանուր առմամբ, 1989-1996թթ. ներառյալ շուրջ 700 հազ. հրեաներ Իսրայել արտագաղթեցին ԽՍՀՄ-ից ու նրա փլուզումից հետո ձևավորված նորանկախ երկրներից։

Եթե զանգվածային ներգաղթը Իսրայել տեղի էր ունենում հիմնականում դժվար կացության մեջ գտնվող պետություններից, ապա «ազատ աշխարհի» երկրներից պարբերաբար ներգաղթում էին անհատ մարդիկ։ Նրանց մեծ մասի համար նման քայլի դիմելու դրդապատճառներն ավելի շատ իդեալիստական էին։ Այս ալիյան հատկապես ուժեղացավ 1967թ. Վեցօրյա հաղթական պատերազմից հետո, ինչը հրեական սփյուռքում բերեց ինքնագիտակցության մեծ աճի։ Միայն հաջորդող երեք տարիների ընթացքում շուրջ 24 հազ. հրեաներ եկան Իսրայել Արևմտյան Եվրոպայից և շուրջ 18 հազար՝ ԱՄՆ-ից։

1990-ական թթ. կեսերից նկատվում է հարավաֆրիկյան, ամերիկյան և ֆրանսիական հրեաների շարժ դեպի Իսրայել. նրանք կամ դիմում են ալիյայի, կամ Իսրայելում սեփականություն են ձեռք բերում՝ ապագայում ներգաղթելու մտայնությամբ։ Այսպես, 2000-2005թթ. ավելի քան 11 հազ. հրեաներ կատարեցին ալիյա Ֆրանսիայից։ Բանն այն է, որ Երկրորդ ինթիֆադայի սկզբնավորմամբ հակասեմական պատահարները Ֆրանսիայում շատացան։ 2002թ., Մարդու իրավունքների հանձնաժողովի հաշվարկներով, գրանցվեցին վեց անգամ ավելի շատ հակասեմական ուղղվածության դեպքեր, քան 2001թ.։ Այդ նույն հանձնաժողովի վիճակագրությունը ցույց էր տալիս, որ հակահրեական ուղղվածությամբ գործողությունները կազմում են երկրում գրանցված ռասիստական հենքով բոլոր դեպքերի ավելի քան 62%-ը։ 2005-ից ի վեր նման երևույթների թիվը նվազեց, բայց և այնպես ենթադրվում է, որ 2007թ. ընթացքում շուրջ 3000 հրեաներ կներգաղթեն Իսրայել Ֆրանսիայից։

Հյուսիսային Ամերիկայից այսօր շուրջ 110 հազ. ներգաղթողներ կան Իսրայելում։ Նրանց ներգաղթն Իսրայել սկսել է անկախության հռչակումից ի վեր, ռեկորդային քանակությունը գրանցվել է Վեցօրյա պատերազմից հետո և 1970-ական թթ.։ Հյուսիսամերիկյան հրեաները ներգաղթում են Իսրայել ավելի շատ կրոնական, քան գաղափարական կամ քաղաքական, սակայն ոչ ֆինանսական պատճառներով։

1999-2002թթ. Արգենտինայում տեղ գտած քաղաքական և տնտեսական ճգնաժամը բերեց նրան, որ միջին դասի հազարավոր ներկայացուցիչներ հսկայական միջոցներ կորցրին։

Ճգնաժամն անմիջականորեն ազդեց նաև Արգենտինայի շուրջ 200 հազարանոց հրեական համայնքի վրա: Նրանց մի մասը որոշում ընդունեց ներգաղթել Իսրայել, որտեղ նրանք նոր հնարավորություններ էին տեսնում: 2000թ. ի վեր շուրջ 10 հազ. հրեաներ ներգաղթեցին Իսրայել: Արգենտինական ճգնաժամն ազդեց նաև հարևան Ուրուգվայ պետության վրա, որտեղից շուրջ 500 հրեաներ կատարեցին ալիյա նույն ժամանակահատվածում: 2002 և 2003թթ. Հրեական գործակալությունը տարածաշրջանից ալիյայի գործընթացին օժանդակելու ինտենսիվ հասարակական գործունեություն ծավալեց և լրացուցիչ տնտեսական օգնություն առաջարկեց Արգենտինայից ներգաղթյալների համար: Չնայած Արգենտինայում տնտեսական կացությունը բարելավվեց, սակայն հրեաները շարունակում են ներգաղթել Իսրայել, ճիշտ է՝ նախկինի համեմատ ավելի փոքր չափերով:

2007թ. սկզբին իսրայելական թերթերից մեկը գրեց, որ 2006թ. միայն 19264 մարդ են ներգաղթել Իսրայել, ինչը 9%-ով ցածր է, քան 2005թ.: Նշվում էր, որ 1988-ից ի վեր դա ներգաղթողների ամենափոքր գրանցված քանակությունն է: Մեկ այլ պարբերական նշում է, որ 2007թ. սպասվում է, որ կներգաղթի շուրջ 14400 մարդ, մինչդեռ ակնկալվում է, որ կարտագաղթի 20000 մարդ: *Jerusalem Post-ը* սեպտեմբերի 17-ի համարում նշում է, որ առաջին անգամ վերջին 20 տարվա մեջ Իսրայելը, թերևս, կունենա բացասական սալդո բնակչության ներգաղթ-արտագաղթի առումով, մի բան, որ գրանցված չէր 1984-ից ի վեր: Այս տարի Իսրայել ներգաղթողների թիվը (14400 մարդ) 5000-ով պակաս է նրանցից, ովքեր նախատեսում են հեռանալ երկրից: Սա վկայում է յոթ տարի ի վեր շարունակվող ահագնացող երևույթի շարունակականության մասին, երբ ներգաղթողների ամենամյա քանակությունը 2000թ. 61542-ից իջավ մինչև 19267-ի 2006թ.:

Աղյուսակ 1

Ներգաղթը Իսրայել. 1948-1999թթ. (ըստ Իսրայելի արտգործնախարարության տվյալների)

Տարիներ	Ասիա	Աֆրիկա	Եվրոպա	Ամերիկա և Օվկիանոսք	Ընդամենը
1948-1951	237.000	94.000	327.000	5.000	687.000
1952-1960	35.000	146.000	103.000	10.000	294.000
1961-1970	49.000	151.000	139.000	45.000	384.000
1971-1980	27.000	16.000	213.000	73.000	330.000
1981-1989	10.000	23.000	60.000	40.000	133.000
1990-1994	6.000	32.000	554.000	17.000	609.000
1995-1999	39.000	12.000	276.000	20.000	347.000
Ընդամենը	403.000	474.000	1.672.000	210.000	**2.784.000**

Ալիյայի շարունակականությունը մեր օրերում պայմանավորված է նախ և առաջ հրեական կազմակերպությունների ակտիվ քարոզչական աշխատանքով: Մասնավորապես, պրոֆեսիոնալ ձևով օգտագործելով ինչպես հայրենասիրական գաղափարները, հիշողության գործոնը, այնպես էլ այլևայլ քարոզչական հնարքներ՝ շրջանառության մեջ են դրված տարբեր տարիքի ու մասնագիտության տեր հրեա մարդկանց ուղղված ֆիլմեր, գործում են տասնյակներով համացանցային կայքէջեր, որտեղ ամեն ցանկացող կարող է սպառիչ տեղեկատվություն գտնել այն մասին, թե ինչ է իրեն սպասում Իսրայելում: Այն բնավ նման չէ տուրիստական տեղեկագրերում հանդիպող գովազդային բնույթի տեղեկատվությանը. դրանցում նշվում են ինչպես առավելությունները, նույնպես և այն դժվարությունները, որ կարող են հանդիպել ալիյայով հայրենիք վերադարձող մարդկանց: Հրեական կազմակերպությունները՝ պետական թե հասարակական, շատ լավ են հասկանում, որ միայն լրջագույն և ծավալուն նախապատրաստական աշխատանքը կարող է ապահովել տասնամյակներ շարունակ ընթացող հայրենադարձություն:

Հարություն Մարության
«Նորավանք» հիմնադրամ

ЭТНИЧЕСКОЕ РАЗМЕЖЕВАНИЕ В ЕВРОПЕЙСКОМ ПОЛИТИЧЕСКОМ ОПЫТЕ

Европейский политический опыт в его межгосударственном срезе содержит в себе весьма показательные образцы возможного разрешения этнополитических конфликтов на основе так называемого процесса «этнического размежевания», ведущего к состоянию «этнической консолидации» в рамках национального государства. При всем кажущемся диссонансе данного процесса с поступательной интеграцией, которая уже долгое время развертывается на европейском континенте, нельзя не отметить тот факт, что Европа не сразу пришла к тому, чем является ныне. На этом тернистом пути «этнонациональной кристаллизации» межгосударственных отношений Старый Свет прошел через несколько крупномасштабных военно-политических конфликтов и две мировые войны. Этап «этнонациональной кристаллизации» межгосударственных отношений относительно благоприятно преодолен европейскими странами, хотя и здесь налицо градация относительной безболезненности данной преодоленности в системе координат «от Западной Европы к Центральной и Восточной Европе и далее на Юго-Восточную Европу». Последний сегмент указанной европейской системы цивилизационно-географических координат (Юго-Восточная Европа) выделяется продолжающимся и на современном этапе поиском оптимальной конструкции межэтнического соседства. Опыт Центральной и Восточной Европы в контексте «этнического размежевания» показателен своей эффективностью в построении относительно устойчивого баланса между концептами «территориальности» и «этничности» соседствующих государств. Многонациональные государства Центральной и Восточной Европе сумели избежать той брутальности, которая была и остается присуща схожим процессам в Юго-Восточной Европе, и сумели выйти на определенную территориально-этническую сбалансированность своих границ.

К государствам, которые традиционно были многонациональными образованиями в центре и на востоке Европы, но сумели во многом «преодолеть» это качество на нынешнем этапе, необходимо отнести Венгрию, Польшу, Чехию и Словакию. В контексте «этнонациональной кристаллизации» и «этнического размежевания» показательны этнонациональные процессы в этих государствах в 20-летний межвоенный период XX века (1918-1939гг.). Несмотря на то, что этнонациональные межгосударственные отношения на данном временном отрезке испытывали на себе фактор огромного внешнего влияния со стороны политики государственного субъекта, оставшегося «неудовлетворенным» итогами Первой мировой войны и решившего пересмотреть их в свою пользу по итогам уже нового крупномасштабного военно-политического противоборства (Германия), в самой внутренней этнополитической структуре стран Центральной и Восточной Европы имелись объективные предпосылки и императивы «настойчивой необходимости» к сбалансированности своих политических и этнических границ[1].

Государственные и этнические границы должны были получить свое дальнейшее определение, кристаллизацию и максимально возможную сбалансированность.

После 1918г. этнические границы центральных и восточноевропейских государств пересекались с политическими. В Польше национальные меньшинства составляли 31% населения. В Чехословакии доля чехов и словаков равнялась 67% (чехов 50%, словаков 17%), немецкое

[1] «С самого начала XIX века развитие национального сознания народов Центральной Европы проходило не изолированно, а в непрерывной конфронтации с соседями. В спорах того времени всплыло на поверхность понятие «собственной этнической области», которое противопоставлялось традиционному понятию «исторической области»» (*Лех Тшечаковски*, Национальный вопрос в XIX и XXвв. как фундаментальная проблема в Центральной Европе // Славянские народы: общность истории и культуры. Сборник статей (отв. ред. *Б.В. Носов*), М., 2000, с. 180).

национальное меньшинство составляло 23% населения страны. Венгерское государство в сравнении с другими, с точки зрения национального состава, было относительно однородным. Национальные меньшинства в нем насчитывали около 8% населения. Однако обратной стороной медали было то, что территория Венгрии занимала едва 30% прежних владений державы Св.Стефана, а более 3 млн венгров жили в Чехословакии и Румынии[1].

Принятые Парижской мирной конференцией постановления по территориальному размежеванию на западных рубежах Центрально-Восточной Европы (ЦВЕ), прежде всего вступивший в силу в январе 1920г. Версальский мирный договор, оказались неконкретны и непоследовательны с геополитических, исторических и этнических позиций. Неопределенной осталась геополитическая ситуация в восточных пределах ЦВЕ, поскольку границу Польши на востоке Верховный совет Антанты 8 декабря 1919г. рекомендовал установить по этническому принципу, но конкретных шагов для воплощения этой идеи в жизнь не предпринял[2].

Национальное политическое самоопределение и создание системы национальных независимых государств в Центральной и Юго-Восточной Европе после Первой мировой войны не разрешили противоречий между этническими общностями и государством, не смягчили конфликтов этих общностей между собой, лишь превратив их в межгосударственные[3].

Венгрия, Польша и Чехия – вслед за выселением около 10 млн немцев после Второй мировой войны – достигли относительно высокой степени этнической однородности и вполне могут рассматриваться как национальные государства, в которых проблема меньшинств существенной политической роли не играет[4]. В своих нынешних «территориально-этнических» границах Польша, Чехия, Словакия и Венгрия пришли к определенному балансу в аспекте «этнического размежевания» со своими ближайшими и отдаленными соседями[5].

Упомянутый исторический экскурс свидетельствует в пользу императива «территориально-этнического разведения» сторон как необходимого условия предотвращения потенциальных этнополитических конфликтов, урегулирования уже существующих этнополитических конфликтов и выведения их на заключительный уровень – этап разрешения.

В контексте урегулирования нагорно-карабахского конфликта опыт **этнической несовместимости проживания армян и азербайджанцев на спорных территориях** указывает на перспективность процесса этнического размежевания армянского и азербайджанского населения на данных территориях как одного из принципиальных подходов долгосрочного урегулирования конфликта. В рамках данного процесса можно совместить несколько принципиальных элементов долгосрочного урегулирования: 1) территориальное размежевание на основе максимально возможной в будущем этнонациональной устойчивости всех сторон конфликта – принцип «границы должны соответствовать этническим реалиям расселения»; 2) возвращение беженцев и внутренне перемещенных лиц (на началах добровольного волеизъявления с их стороны) исключительно на те территории, где возможны эффективные гарантии их безопасной жизнедеятельности со всеми необходимыми элементами политико-правового обеспечения таких гарантий (международные гарантии, получение гражданства и т.п.) – принцип «национальные меньшинства там, где у них будет соответствующий статус и гарантии безопасности»; 3) максимально возможное компенсирование утраченного имущества и морального ущерба тем категориям беженцев и вынужденных переселенцев, которые откажутся от возвращения в места своего доконфликтного проживания.

Михаил Агаджанян

---

[1] *Лех Тшечаковски*, указ. соч., с. 181.

[2] ***Виктор Зубачевский,*** Восточная часть Центральной Европы в 1918-1920 годах, http://his.1september.ru/articlef.php?ID=199901003.

[3] *С.А. Романенко*, Типология процессов национального самоопределения // «Общественные науки и современность», 1999, №2, http://www.ecsocman.edu.ru/images/pubs/2004/09/23/0000177771/006rOMANENKO.pdf

[4] *Альгис Празаускас*, Национальные меньшинства в посткоммунистических странах // «Pro et Contra», Том 3, №4, Осень 1998, с. 177.

[5] См. Приложение.

Приложение

Показатели «этнической консолидации» Польши, Венгрии, Чехии и Словакии на современном этапе

Польша

По данным переписи населения 2002 года, 96,74% населения страны являются этническими поляками. К другим национальностям отнесли себя 1,23% процента населения страны. 2,03% опрошенных не указали национальность.

Официально признанными национальными меньшинствами Польши являются немцы, украинцы, литовцы. Согласно закону Польши, принятому 6 января 2005г., в гминах (административно-территориальная единица страны), где не менее 20% населения представлены национальными меньшинствами (таких гмин в Польше 41), в государственных учреждениях вводится второй язык. Положения данного закона относятся также к названиям местностей, компактно населенных представителями национальных меньшинств.

Венгрия

Этническими венграми является 95% населения страны. Наиболее значительные в количественном выражении национальные меньшинства: цыгане (2%), немцы (1,2%), евреи (1%), румыны (0,8%), словаки (0,4%), хорваты (0,2%), сербы (0,2%) и украинцы (0,1%).

В соседних странах продолжают проживать многочисленные венгерские общины – особенно в Словакии, Украине (Закарпатье), Румынии (Трансильвания) и Сербии (Воеводина).

Чехия

Основу населения страны составляют этнические чехи - 95%; остальные - словаки, поляки, немцы, венгры, цыгане, евреи, украинцы и др. После разделения Чехословакии в 1993 году некоторые словаки остались в Чехии и составляют приблизительно 2% населения.

Словакия

Этнических словаков – 86%. Крупнейшим национальным меньшинством Словакии являются венгры (около 10% населения страны), проживающие на юге страны и составляющие в двух районах южной Словакии большинство населения (Дунайска Стреда 83 % и Комарно 69%). Венгерский язык имеет равное хождение в южной Словакии. Другие национальные меньшинства: цыгане (1,7%), чехи (0,8%), украинцы (0,6%), немцы, поляки.

ՀԱՅՈՑ ԱՌԵՎՏՐԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՆՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ

ԲԵԼԳԻԱ
(միջնադար – XXդ. առաջին քառորդ)

Եվրոպական այս երկիրն իր անվանումն ստացել է հնամենի ժամանակներում այստեղ բնակվող բելգ ցեղից: Ք.ա. I դարում Հռոմը նվաճեց Բելգիան և դարձրեց կայսրության գավառներից մեկը՝ *Provincia Belgia*: Հետագայում երկրին տիրեցին Իսպանիան, ավստրիական Հաբսբուրգները: XVIIդ. քաղաքացիական պատերազմ ծագեց, որի հետևանքով հյուսիսային գավառներն անջատվեցին և հիմնեցին ինքնուրույն պետություն Հոլանդիան:

Ժամանակակից Բելգիան զարգացած, բարձր կենսամակարդակով երկիր է: Այստեղ են գտնվում միջազգային ու համաեվրոպական բազմաթիվ կառույցներ:

Բելգիա ոտք դրած առաջին հայը «պաշտոնապես» համարվում է Անտիոքի Մակար եպիսկոպոսը: Նա ծնվել է 970թ., ազնվականի ընտանիքում: 25-ամյա հասակում արդեն ձեռնադրվել է եպիսկոպոս, իսկ փառքը, որպես հրաշագործ, տարածվել է ամենուր: Նա ստիպված է եղել Անտիոքից փախչել Երուսաղեմ, ուր հավատքի համար դաժան չարչարանքների է ենթարկվել: Այդտեղից անցել է Գերմանիա, իսկ 1011թ. եկել Գենտ, ուր զբաղվել է քարոզչությամբ: Մեկ տարի անց բելգիական այս քաղաքում ժանտախտ բռնկվեց: Հրաշագործ Մակարը խնամում, բուժում էր հիվանդներին, սակայն ինքն էլ վարակվեց ու մահացավ: Հռոմի եկեղեցին ընդունեց հայ եպիսկոպոսի հրաշագործ լինելը, նրան դասեց սրբերի շարքը և արժանացրեց Գենտի եկեղեցու խորանում թաղվելու պատվին: Սուրբ Մակարի օրը մտավ լատին եկեղեցու տոնացույցի մեջ, և ցայսօր ամեն տարի ապրիլի 10-ին նշվում է *Sant Macarius-ի* տոնը:

Հայ-բելգիական «կանոնավոր» ծանոթություններն սկիզբ են առնում խաչակրաց արշավանքներից: Սբ. Երուսաղեմն անհավատներից ազատագրելու պայքարի ելածների մեջ առաջնությունը պատկանում էր թիկնոցներին կանաչ խաչ կրող բելգիացիներին: 1096թ. առաջին արշավանքի ժամանակ՝ Գոդֆրուա դը Բույոնի գլխավորությամբ, բելգիացիներն ու մյուս եվրոպացիները ոտք դրեցին Կիլիկիա, որը դարձավ նրանց հավատակից աջակիցը: Հետագա վեց արշավանքների ժամանակ կիլիկեցիների ու բելգիացիների փոխհարաբերություններն այնքան սերտացան, որ անգամ «ամրագրվեցին» ամուսնական հարաբերություններով: Դիցուք, Ռուբինյան Կոստանդինի որդի Լևոնը կնության առավ Բոդուեն դյու Բուրգի դստերը, իսկ Լևոնի աղջիկն ամուսնացավ Ժոսլենի հետ:

Հայ-բելգիական դաշնակցային հարաբերությունները շատ արագ ձեռք բերեցին տնտեսական բնույթ: Խաչակիրների հետ գալիս էին նաև մեծաթիվ վաճառականներ, որոնք առևտրատնտեսական բուռն գործունեություն ծավալեցին Կիլիկիայում: Հայկական թագավորությունը խոշոր առևտրական օղակ էր Արևելքի ու Եվրոպայի միջև: Միջին դարերում Ասիայից բազմատեսակ ապրանքներ էին բերվում Միջերկրական ծովի Տյուրոս, Աքեա, Բեյրութ, Տրիպոլի նավահանգիստներ՝ այդտեղից Եվրոպա փոխադրելու համար: Ծայրագույն Արևելքից Ալեա և Ադեն նավահանգիստներ էին հասցվում չինական հախճապակի, գորգ, մուշտակ, մարգարիտ, մետաքս, բուրումնավետ յուղեր և այլն, որոնք քարավաններով տեղափոխվում էին Միջերկրականի ծովեզերք: Մի շարք քաղաքներում հիմնվել էին արհեստագործական ձեռնարկություններ, որտեղ հումքը վերամշակելով ստանում էին եվրոպական գործածման արտադրանք. Անտիոքում ու Տրիպոլիում՝ մետաքսե գործվածքեղեն, Երուսաղեմում՝ ոսկերչական իրեր, Տյուրոսում՝ շաքար ու քաղցրավենիք, Հեբրոնում՝ ապակեղեն և այլն: Նորանոր խաչակիրներ և պարենային մատակարարում բերող իտալական ու բելգիական նավերը հետ էին դառնում վերոհիշյալ զարմանազան արևելյան ապրանքներով բեռնավորված:

Բնականաբար, հայ վաճառականները չէին կարող անհաղորդ մնալ միջազգային խոշորագույն այս առևտրական գործընթացին: Նրանք սկսեցին նախ միջնորդավորված, ապա

ուղղակիորեն Եվրոպա արտահանել բուրդ, բամբակ, Փոքր Հայքի հանքերի պղինձ ու երկաթ, գինի, չամիչ, չիր, կաշի, ամենատարբեր կենդանիներ՝ ձի, ջորի, ուղտ, ավանակ, այծ, գոմեշ և այլն: Սակայն հայոց ամենագլխավոր ապրանքատեսակն, անշուշտ, մետաքսն էր. Կիլիկիայում դա այնքան շատ ու տարածված էր, որ հասարակ մարդիկ անգամ մետաքսե հագուստ էին կրում, այնինչ Եվրոպայում այդպիսի ճոխությունը հասու էր միայն ամենաուններներին:

Շուտով Միջերկրական ծովի ասիական ափի ամենանշանավոր պահեստարան ու փոխադրակենտրոն դարձավ Այասը՝ Կիլիկիայի տնտեսական սիրտը, որը խամրեցրեց մյուս նավահանգիստների համբավը: Այաս սկսեցին երթևեկել իտալացիներ, հույներ, ֆրանսիացիներ, իսպանացիներ, պորտուգալացիներ, ինչպես նաև բելգիացիներ, որոնք այստեղ էին հասնում Բրյուգե նավահանգստից:

Բրյուգեն (Բրյուժ) գտնվում էր հարմար ու ապահով Զվինել ծովախորշում: Ունենալով աշխարհագրական շահավետ դիրք Ֆրանսիայի, Անգլիայի ու Գերմանիայի միջև՝ Ֆլանդրիա գավառի այս քաղաքը XI-XVդդ. դարձավ եվրոպական առևտրի խոշորագույն կենտրոններից մեկը: Անգլիայից այստեղ էին բերում բրդե կտորեղեն, Ռուսաստանից՝ մորթի-մուշտակեղեն, Հունգարիայից ու Բոհեմիայից՝ մետաղներ և ապակեղեն, Իսպանիայից՝ կենցաղային զանազան իրեր և այլն: Բրյուգեն նաև ֆինանսական կենտրոն էր, որտեղ իրականացվում էին խոշոր դրամական գործարքներ: Պատահական չէ, որ «Հյուսիսային Վենետիկ» անվանվող այս քաղաքում բնակչության գերակշիռ մասն օտարերկրացիներ էին՝ աշխարհի տարբեր ծագերից այստեղ հայտնված այլազգի վաճառականներ:

Այդ ժամանակները վերլուծելով՝ խորհրդային թատերագիտության հիմնադիր, Վերածնության դարաշրջանի արվեստի ու գրականության լավագույն մասնագետ Ա.Ջիվելեգովը (1875-1952թթ.) դեռևս 1904թ. գրում էր. **«XIIIդ. կեսերին սկսվում է Ֆլանդրիայի ծաղկման շրջանը: Բրյուգեն դառնում է Արևմուտքի ամենաաշխույժ նավահանգիստներից մեկը: Ամենատարբեր ապրանքներ, որոնց մեջ աչքի էին ընկնում տեղական արտադրության մահուդներ, առատությամբ զարմացնում էին պատահական այցելուներին: XIIIդ. վերջին կազմվեց ապրանքների մի ցանկ, որոնք Բրյուգե էին բերվում տարբեր երկրներից: Այդտեղ գրանցված են 34 երկրներ, ընդ որում՝ հիշատակված չեն ո՛չ Ֆրանսիան, ո՛չ իտալական քաղաքները, որոնց հետ հարաբերություններն ավելի սերտ էին, քան թվարկվածներից որևէ մեկի: Այդ ցանկում են Անգլիան, Շոտլանդիան, Իռլանդիան, սկանդինավյան երկրները, Ռուսաստանը, Լեհաստանը, Հունգարիան, Չեխիան, իսպանական իշխանապետությունները, աֆրիկյան էմիրությունները, Կոստանդնուպոլիսը, սիրիական նավահանգիստները, *Հայաստանը* (ընդգ. մերն է: Խոսքն, անշուշտ, Կիլիկյան Հայաստանի մասին է– *Խ.Դ.),* Թաթարստանը, ընդ որում՝ յուրաքանչյուրի կողքին թվարկված են այն ապրանքները, որոնք բերվում են Ֆլանդրիա, իսկ վերջում ավելացված է. «Ոչ մի երկիր ապրանքների առատությամբ չի կարող համեմատվել Ֆլանդրիայի հետ»:**[1] Հավելենք, որ Ա.Ջիվելեգովը, հավանաբար, օգտվել է Փարիզի Ազգային գրադարանում պահվող մի վավերագրից, որտեղ Հայաստանից բերված ապրանքներից նշված են բամբակը, պղպեղը, ուրիշ համեմունքներ, **«եւ բրեսիսը, որ ներկելու փայտ է»** *(Le Grand d'Aussy, Fabliaux, Paris, 1829, p.8)*[2]:

Բրյուգեում հայ վաճառականների ներկայությունը շարունակվեց հետագայում ևս: Արդեն 1358-1360թթ. բազմաթիվ վաճառականներ կայուն բնակություն հաստատեցին և առևտրական լայն գործունեություն ծավալեցին. իրենց բերած ապրանքների դիմաց նրանք գնում էին տեղական գործվածքներ, այլ երկրների տարբեր ապրանքներ և դրանք տանում կամ առաքում էին Միջերկրականի ասիական նավահանգիստներ: Բրյուգեում միջազգային առևտրով զբաղվող բոլոր ազգերի ներկայացուցիչներն ունեին իրենց «ազգային տները», որոնք կոչվում էին *լոժա* (loge): Հայերը նույնպես ունեին իրենց լոժան կամ «Հայ տունը», որը կանգուն մնաց մինչև XIII դար:

Սակայն Բրյուգեի միջազգային փառքը երկար չտևեց. XVդ. վերջերին ծովախորշը լցվեց ավազով, նավերը զրկվեցին քաղաքին մոտենալու հնարավորությունից, և նավահանգիստը կորցրեց իր առևտրական նշանակությունը:

---

[1] А. Дживелегов, Торговля на Западе в средние века, СПб., 1904г., с. 177.

[2] Ա.Սարուխան, Բելգիա եւ հայերը, Վիեննա, 1937թ., էջ 123:

Հետագա դարերում հայոց այցելությունները Բելգիա, հավանաբար, դրվագային, անկանոն բնույթ են կրել, քանզի տեղեկությունները խիստ սուղ են։ Հայտնի է, օրինակ, որ 1708թ. վախճանվել և Անտվերպենի (Անվերս) Սբ. Աստվածամոր մայր տաճարի խորանի առջև է թաղվել Վանանդեցի Թովմաս արքեպիսկոպոս Նուրիջանյանը։

1895-1896թթ. Արևմտյան Հայաստանում համիդյան ջարդերը պատճառ դարձան բնօրրանից հայոց զանգվածային արտագաղթի։ Մի փոքրաթիվ խումբ էլ հայտնվեց Բելգիայի մայրաքաղաք Բրյուսելում և Անտվերպեն նավահանգստում, ինչի հետևանքով մինչև Առաջին աշխարհամարտը ձևավորվեց շուրջ 50 արևմտահայ վաճառականներից բաղկացած զուտ առևտրատնտեսական համայնք։ Ցեղասպանությունից հետո թվաքանակը կտրուկ աճեց և հասավ 1000-ի, ընդ որում՝ 1917-ից հետո արևմտահայերին համալրեցին կովկասահայերը, ի մասնավորի՝ թիֆլիսցի կապիտալիստները, որոնք ստիպված էին բոլշևիկյան աղետից փրկել տասնամյակների տքնանքով վաստակած իրենց դրամագլուխները։

Անչափ հետաքրքիր է համայնքի տնտեսական բնութագիրը։ 1926թ. տվյալներով՝ տարբեր տարիքի երկսեռ 1000 հայից բիզնեսով զբաղվում էր 100 տղամարդ, որոնք ընդգրկված էին տնտեսական գործունեության երեք հիմնական ոլորտներում՝ *ծխախոտարդյունաբերության, ակնագործության և գորգավաճառության* մեջ։

Թիվ 1 բիզնեսը *ծխախոտարդյունաբերությունն* էր. բավական է ասել, որ 86 վաճառականներից 42-ը զբաղվում էին ծխախոտի առևտրով, իսկ 14 հայապատկան գործարաններից 12-ը ծխախոտարդյունաբերական էին։ Դրանցից ամենանշանավորներն էին Անտվերպենի «Տ.Չամքերթեն և ընկ.» **«Արաքս»** գործարանը և Բրյուսելում գործող Ա. և Հ. Գոյունճյան եղբայրների **«Էլմասը»**, Դավիթ Մսրյանի **«Տավրոսը»**, Տիգրան Մուրադյանի **«Կարսը»**, Անտոն Մաթոսյանի **«Մարուֆը»**, նախկին թիֆլիսցի, Հայաստանի Առաջին Հանրապետության կառավարության երբեմնի անդամ Արտաշես Էնֆիաճյանի **«Էնֆին»**։

Սրանցից բացի, կային ծխախոտարդյունաբերական այլ ձեռնարկություններ ևս։ Այսպես, Բրյուսելում Ալեքսան Մաթոսյանն ուներ խավաքարտի (կարտոնաժ), Պալըքճյան եղբայրները՝ սիգարետի ժապավենի, Անտվերպենում՝ Ժ.Նիգորյանը, Տ.Սալամանյանը՝ խավաքարտի, իսկ Տեր-Սահակյանը՝ սիգարետի տուփերի պատրաստման գործարաններ։

Զարմանալի օրինաչափություն էր աչքի զարնում բիզնեսի մյուս երկու հիմնական տարատեսակների՝ *ակնագործության*[1] և *գորգավաճառության* հարցում. եթե առաջինը կենտրոնացած էր Անտվերպենում, ապա երկրորդը՝ Բրյուսելում։ Այսպես, եթե 1926թ. մայրաքաղաքում կար ընդամենը 3 ակնագործ (Գասապյան եղբայրներ և Հ.Ճշմարտախոսյան), ապա գորգավաճառների թիվը 19 էր (Օ.Արզուման, Գաբրիելյան, Հ.Գանանյան. Կ. և Տ.Գարաքեհյան եղբայրներ, Լ.Գուլազոզյան, Կ.Զարդարյան, Ա.Էմիրզյան, Զ.Հաճյան, Զ.Մաճառյան, Զ.Մալեզյան, Հ.Ոսկյան, Ե.Պազիր, Հ.Սարաճյան, Հ.Սիմոնյան, Տեւլեթ, Փափազյան եղբայրներ, Հ.Փաշինյան)։ Եվ, հակառակը, եթե Անտվերպենում կար ընդամենը 5 գորգավաճառ (Շ.Իսրայելյան, Հ.Գյումուշյան, Մաղաքյան, Ն.Վրույր, Ա.Քյոսելեճյան), ապա 18 հոգի զբաղվում էր ակնագործությամբ (Հ.Ալթունյան, Հ.Բարթիկյան, Ս.Թոքատլյան, Մ.Իփեքճյան, Վ.Կյումուշճյան, Հ.Համամճյան, Գ.Համբարձումյան, Ա.Ճանիկյան, Գ.Մագսետյան, Բ.Միրտիկյան, Վ.Մսրյան, Ա.Հովակիմյան, Լ.Պաքըրճյան, Հ.Պարոնյան, Գ.Պասմաճյան, Գ.Սահակյան, Ա.Սիրակյան)։[2]

Մեր ընդգրկած ժամանակաշրջանի ամենաականավոր բելգիահայը **Տիգրան Չամքերթենն** է (?, Եվդոկիա-1942,Նիս)։ Նա ծննդավայրից արտագաղթում է Կ.Պոլիս, ապա 1896թ. ջարդի ժամանակ տարագրվում Ալեքսանդրիա, ուր մեկ տարի ղեկավարում է «Գ.Սանոսյան» ծխախոտի ֆաբրիկան։ Հմտանալով գործի մեջ՝ Տ.Չամքերթենը մտադրվում է ինքնուրույն բիզնես հիմնել, սակայն Եգիպտոսում դա անելը շատ դժվար էր, որովհետև հայ ծխախոտարդյունաբերողները գրավել էին շուկան, և մրցակցությունը խիստ մեծ էր։ Այդ իսկ պատճառով նա մեկնում է Սուդան և իշխանություններին առաջարկում ծխախոտի նոր տեսակ աճեցնել։ Նրան տրամադրում են փորձադաշտ, ուր մի քանի տարվա տքնաջան աշխատանքից հետո

---

[1] Ակնագործություն ասելով նկատի ունենք թե՛ ակնատաշությունը՝ ալմաստից ադամանդ ստանալը, թե՛ առհասարակ թանկագին քարերի առևտուրը։

[2] Սույն վերլուծությունը կատարել ենք *Ֆրանսահայ տարեգիրք-1927, Փարիզ, 1926թ.* աղբյուրում զետեղված ցանկի ուսումնասիրման հիման վրա։

փայլուն արդյունքի է հասնում: Սակայն կառավարությունը յուրացնում է ծխախոտի այդ նոր տարատեսակը: Այնժամ Տ.Չամքերթենը հայց է ներկայացնում ընդդեմ Սուդանի կառավարության և դատը շահում: Որպես վնասի փոխհատուցում ստանալով պատկառելի գումար՝ նա 1900-ական թթ. տեղափոխվում է Բելգիա և Անտվերպենում հիմնում «Տ.Չամքերթեն և ընկ.» ֆիրմայի «Արաքս» խոշորագույն ծխախոտարդյունաբերական համալիրը:

Տ.Չամքերթենը խորապես ազգասեր մարդ էր. 1910-ից ՀԲԸՄ Անտվերպենի մասնաճյուղի ատենապետն էր, 1914-ին Բարեգործականին հատկացրեց 500 օսմանյան ոսկի: 1919թ. նշանակվեց ՀՀ հյուպատոս Անտվերպենում, իսկ անկախության կորստից հետո աջակցեց Խորհրդային Հայաստանին՝ 20.000 ֆրանկ հատկացրեց Նոր Եվդոկիա ավանի կառուցմանը, 50.000 ֆրանկ տրամադրեց Երևանի Գյուղատնտեսական բանկին՝ բաժնեկից դառնալու պայմանով, սակայն ոչ բաժնետոմսերն ստացավ, ոչ շահութատոկոսները, ոչ դրամագլուխը... Բայց Տ.Չամքերթենը չվհատվեց. 1931թ. 15.000 ֆունտ ստերլինգ նվիրաբերեց հայ ուսանողական հիմնադրամներին, ինչի համար հռչակվեց ՀԲԸՄ բարերար-անդամ: 1930-ական թթ., առաջացած տարիքի պատճառով, բիզնեսից հետ քաշվեց, տեղափոխվեց ֆրանսիական Նիս, ուր հայոց համար մատուռ կառուցեց և կնքեց մահկանացուն[1]:

Խաչատուր Դադայան
«Նորավանք» հիմնադրամ

[1] Տ.Չամքերթենի մասին սուղ տեղեկությունները ժողովել ենք հետևյալ աղբյուրներից՝ *Թեոդիկ, Ամէնուն տարեցոյցը-1921, Կ.Պոլիս, 1921թ., էջ 153; Ա.Ալպօյաճեան, Պատմութիւն Եվդոկիոյ հայոց, Կահիրէ, 1952թ., էջ 1701-1702; Վ.Համազասպյան, Հայկական բարեգործական ընդհանուր միությունը և Հայաստանը, Ե., 2001թ., էջ 139:*